Հեռ Կիւնթէր կ'աւելցնէ. "Օր մը մեր թշնամիները շատ մեծ գնով ձեռք պիտի անցնեն այս վաւերագիրը որովհետեւ մեր զինուորական առաքելութեան անդամներէն մէկուն ս տ ո ղ ա գ ը ու թ ե ա մ ք պիտի կարենան ապացուցանել թե Գերմանները հառապարութիւն եւ զինուորական իշխանութիւն Գ ոչ թէ միայն Հայերու դէմ եղած հալածանքները կասեցնելու համար ոչինչ ըրին, այլ նաեւ այդ մասին իրենցմէ տրուեցան որոշումներ, այսինքն՝ իրենց կողմէ ս տ ո ղ ա գ ը ու ե ց ա ն:

"Իրողութիւնը այն է որ վաւերագիրը, որու մասին զաջ պիտի լսուուի ապագային, կը կրէ ոչ թէ թրքական այլ գերմանական ստորագրութիւն մը, որ արժէք պիտի ունենայ նաեւ թուրքերու համար, ինչպէս զինուորական գործավարը մատնանշեց կծու բառերով:"

Պ Ա Շ Տ Ս Ն Ա Կ Ա Ն Կ Ա Հ Ա Յ Ո Ւ Յ Ա Կ

Հանրութեան ղատաստանին կը յանձնենք հայ ընտանիքէ մը գրաւուած տան գոյքերու պաշտօնական կահացուցակը գնահատուած թուրք մասնագէտներու կողմէ եւ հաստատուած բազմաթիւ ստորագրութիւններով:

Թուրք Պատերազմական Ատեանը կարդալ կու տայ նոյն կահացուցակը Քէմալի, Թէվախի եւ Ֆէյեազի ներկայութեան: Ան կը բովանդակէ 470 կտոր առարկաներ գնահատուած 15,120 դահեկանի: Ատեանի նախագահը կը հարցնէ Քէմալի. "Թէվախի եւ Ֆէյեազ Պէյերը ակումբի անունով գնահատեր են ապրանքներու գինը, եւ Դ Ո Ւ Ն անկէ մեծ քանակութեամբ ապրանքներ առեր ես ԱՍԻԱՆՑ ՀԻՆԳ ՓԱՐԱ ՎՃԱՐԵԼՈՒ:"

Հայ վաճառական Աթանասեան տեղահանուած եւ կոտորուած է իր ընտանիքի անդամներուն հետ: Անոր տունը եւ կարասիները կը գրաւեն եւ Երիտասարդ թուրքերու ակումբի կը վերածեն:

ԵՈՋՂԱՏԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՆԵՐՍԷՍ ԴԱՆԻԷԼԵԱՆԻ

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՄԱՏԱՆԻՆ

Թուրք Պատերազմական Ատեանը մասնաւորապէս կը զբաղի նաեւ Եոզղատի Առաջնորդ Ներսէս Դանիէլեանի եպիսկոպոսական մատանիով: Նախագահը կը հրամայէ մասնաւոր քննութիւն կատարել թէ ո՞ր եւ ե՞րբ մեռաւ առաջնորդը. թէ ո՞վ էր որ անոր մատէն եպիսկոպոսական մատանին հանեց, թէ ե՞րբ մատանին աճուրդով ծախուեցաւ եւ ո՞վ գնեց զայն որքան վճարելով:

Նախագահը կը հրամայէ. "Առաջնորդը ո՞ր սպանուեցաւ... Անոր մատի մատանին ի՞նչպէս եւ ո՞ր անցաւ էվզաձի տնօրէն Կէյի ձեռքը... *Ննեցէք ստուգութիւնը եւ անմիջապէս հեռագրով իմացուցէք. թուղթերն ու վաւերագրերը շուտով մեզի ղրկեցէք:"

Եոզղատի կառավարիչը քննութիւն կատարելէ ետք կը հաղորդէ Պատերազմական Ատեանին. "Առաջնորդի մատի մատանին՝ Լ Ո Ւ Մ Ա Ր Բ Ի Յ Ա Ն Վ Ն Ա Ռ Ո ՒՄ Բ Ի կազմակերպած աճուրդի ընթացքին երկու հազար երեք հարիւր քսան դահեկանի [812 տոլար եւ յիսուս սէնթի 9] ծախուած է Կէյի պատասխանատուութեան տակ:"

Կէյի Թուրք Պատերազմական Ատեանի նախագահի հարցումին պատասխանեց թէ ինք աճուրդէն գնած էր եպիսկոպոսական մատանին... անուշտ առանց դահեկան մը վճարելու:

Կ Ո Վ Ո Ր Ո Ւ Ա Մ Հ Ա Յ Ե Ր Ո Ւ Կ Ե Ն Ա Յ

Տիկին Ազնիւ Իբրանոսեան կոտորածէն ազատուեցաւ եւ հաշուակալ Վէհպի Պէյի տան մէջ մնաց ժամանակ մը: Կառավարիչ Քէմալ Պէյ եւ իր ժողովականները ամէն գիշեր Վէհպի Պէյի տան մէջ "Հայերու կենաց բաժակներ կը բարձրացնէին" եւ կ'որոշէին երկրորդ օրուան իրենց կատարելիք գործերը: Մինչ Տիկին Ազնիւ կիներու յարկաբաժինին մէջ մտիկ կ'ընէր անոնց խօսակցութիւնը եւ առած որոշումները: Ան Պատերազմական Ատեանի առջեւ կը վկայէ. "Ես պահուշտած էի այդ տան մէջ... Ամէն օր Քէմալ եւ Թէվֆիգ Վէհպիի տան այրերու յատկացուած բաժնին մէջ կը խորհրդակցէին..."

"Քէմալ . Այս կինը սուտ կը խօսի...

"Նախագահ . /Քէմալի կը հարցնէ/ Օղիի սեղաններու շուրջ խ/ախձանքներ չսարքեցիք:

"Ազնիւ . Այո՞, ես չեմ ^{ուրանար} ~~մտնար~~/եղած բարիքը, բայց չեմ կրնար մոռնալ միեւնոյն ատեն որ անոնց հետ քու [Վէհպի Պէյի Գ] սենեակին մէջ կը խմէիք իրարու կրկնելով "Հայերու կենաց... Ես դրան ետեւէն մտիկ կ'ընէի:"

Աւելի մանրամասնութիւններ փափաքողները կրնան կարգաւ "Եոզղատի Հա-
յասպանութեան Վաւերագրական Պատմութիւնը" որ անգլերէնի պարզ համառօտութիւնն է: Հայերէն հատորը գրուած էր տարիներ առաջ, Պէյրութի մէջ Եոզղատի հայրենակցական միութեան ատենապետին խնդրանքով՝ իբր յաւելուած նոյն գաւառի պատմագրքին, որուն տպագրութիւնը կարելի չեղաւ շարունակել Պէյրութի եղբայրասպան կռիւներու հետեւանքով:

Եոզղատի Հայասպանութեան Վաւերագրական Պատմութիւնը անգլերէն լեզուով գրուած է, մօտաւորապէս հազար էջերէ կը բաղկանայ: Հայերէն գրքէն գոյանալիք գումարը պիտի յատկացուի անգլերէնի հրատարակութեան:

Ապրիլ 24 էն մինչեւ Մայիսի վերջ եղած կանխիկ ապսպրանքները պիտի արժեն միայն 27, 50 տոլար առաքումի ծախքով միասին: Մայիս 31 էն ետք գրքի գինը պիտի ըլլայ 35 տոլար: *Գրանցարակումն արդար 32 և 42;*

Թող փաքաքողները իրենց չէքերը գրեն Գրիկէրի անունով եւ դրկեն հետեւեալ հասցէին

K R I E G E R
P.O. Box 357
Forest Hills, N.Y. 11375

Սահմանափակ օրինակներ հրատարակուած են այս գրքէն որուն մէջ փոփոխ պաշտօնական վաւերագրերը միայն կը խօսին:

ՇՈՎՀԱՍՏԻ ՀԱՅԱՍՏԱՆՈՒԹԵԱՆ ՎԱԽԵՐԱԳՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Երկրորդ տարի Հայաստանում Վախերագրական Պատմությունը գիրք մըն նման ուրիշ գիրքերու, գեղարվեստ, 468 էջերէ բաղկացած:

Սակայն ան բոլորովին տարբեր է մինչեւ հիմա հրատարակուած բոլոր գիրքերէն իր մասնայատուկ բովանդակութեամբ: Ամէն ինչ անոր մէջ նորութիւն է. ամէն ինչ յայտնութիւն է ոչ թէ միայն հայութեան այլ նաեւ ամբողջ միջազգային պատմութեան եւ իրաւարոհութեան համար:

Այս հատորը գիտական ուսումնասիրութիւն մըն է հրատարակուած հայաստանութեան 65րդ տարեդարձին առթիւ, լոկ թուրք պաշտօնական վախերագրերու լոյսին տակ բանաձեւուած եւ հանրութեան դատաստանին յանձնուած:

Այս գրքի թուրք պաշտօնական վախերագրերու վաւերականութիւնը հաստատուած է նոյնինքն թուրք Պատերազմական Արտակարգ Ատեանի կողմէ, որ 1919-1921 տարիներու ընթացքին Հայերու բռնի տեղահանութեան եւ կոտորածի պատասխանատուները դատեց, Սսմանեան քաղաքային եւ զինուորական պատժագրքերու տրամադրութեան համաձայն վճիռներ արձակեց գործածելով թուրք պաշտօնական վախերագրերու բովանդակութիւնը: Այս վճիռներէն շատեր հրատարակուած են թուրք Պատերազմական Ատեանի պաշտօնաթերթ թԱԿՈՒԻՄԸ ՎԱԳԱՅԻ ՏԻՎԱՆԸ ՀԱՐՊԻ ԷՍՐՁԻ ՄՈՒՀԱԽ ԷՄԱՅԸ ՋԱՊԻՑ ԵՒ Ի յաջորդական թիւերուն մէջ:

ՎԱԽԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

Պոլսոյ զօրակայքի հրամանատար եւ Թէշքիլաթը Մարսուսայի վարիչ հազարապետ ձեւատ Պէյ կը փորձէ ուրանալ: Ատեանի նախագահը կարգաւ կու տայ հեռագիրներ, որոնցմէ երեքը կը կրէին անոր ստորագրութիւնը:

Նախագահը կը հարցնէ ձեւատ Պէյի. "Այս երեք առաջին հեռագիրներուն ստորագրութիւնը ձերն է:

"ձեւատ Պէյ. քննել է ետք ստորագրութիւնները, այդպէս կը մտածեմ: Անոնք կրնան իմս ըլլալ: Ձեմ յիշեր, ժամանակ անցած է:"

Ատեանի նախագահը չի գոհանար այս տատամսոտ խոստովանութեամբ. կրկին

կը հարցնէ ամբաստանեալին. " Այս հեռագրին վարի կողմը լուսանցքի մէջ ու
թագրութիւն մը կայ. "այսպիսի կարեւոր հեռագիրներու բնագիրները պէտք է
ետ վերադարձուին կանոնի համաձայն: Կ'ըսես զանոնք պահելու համար Իթէշքիլաթը
Մախսուսայի թղթածրարներու մէջ:" Ինչ ըսել կ'ուզես:

"Ճեւատ Պէյ. Ինչպէս..."

Նախագահի հրամանով քարտուղարը կը կարդայ. "Իթէշքիլաթը Մախսուսայի կա-
նոնին հետեւելով անհրաժեշտ է հեռագիրներու բնագիրները ետ վերադարձնել...

"Նախագահ. ասիկա ձեր ձեռագիրն է:

"Ճեւատ Պէյ. Նայիմ, Տէր Իմ, բնագիրները պէտք է ըլլան, վերադարձուած
եւ թղթածրարներու մէջ դասաւորուած ըլլալու են:

"Նախագահ. լուսանցքի վարի գրութիւնը ձեր ձեռագիրը չէ":

"Ճեւատ Պէյ. ձեռագիրն իմս պէտք ըլլայ..."

"Նախագահ. Թող անգամ մըն ալ նայի:

"Ճեւատ Պէյ. այս Զեռափորն ԻՄՍ է..."

"Նախագահ. անգամ մըն ալ ցոյց տուէք:

"Ճեւատ Պէյ. ասիկա իմ ձեռագիրս է..."

Ուրիշ օրինակ մը.

Թուրք Պատերազմական Ատեանի առջեւ ամբաստանեալներ եւ երբեմն ալ վկա-
ներ կ'ուրանան առ հասարակ գրութիւնն ու ստորագրութիւնը:

Կառավարիչ Քէմալ Պէյի գրաւոր հարցաքննութիւնը տեղի ունեցած էր 15
եւ 16 Դեկտեմբեր 1918 ին: Այդ առթիւ ան յայտնութիւն մը կատարած էր թէ
Հայերու տեղահանութեան վերաբերեալ հրամաններէն ոմանք ա յ ռ ու ա ծ էին
ընթերցումէն ետք՝ դրկողի բացայայտ հրամանով:

Ատեանի նախագահը կը հարցնէ կառավարիչ Քէմալի. "Նախնական հարցաքննու-
թեան մէջ ըսած էք որ տեղահանութեան թուղթերու մէկ մասը այրած ենք. ասիկա
ձեր ստորագրութեան տակ է. ո՞ր թուղթերը այրեցիք:

"Քէմալ. ես այդ վկայութիւնը գրած ատենսարդէն ձամբորդութենէ նոր եկած,

յոգնած վիճակ ունէի. աճապարանօք գրեցի, որովհետեւ միջոց չտուին հանգստանալու. ատիկա ձիղդ չէ:

"Ընդհանուր Դատախազ. ես այդ քննիչ մարմնոյ մէջ էի. այս հարցումներուն պատասխանը երեք չորս ժամէն գրեց. հետեւաբար իր այս խօսքը ձիղդ չէ:"

Երբ Քէմալ ուրիշ վաւերագրերու մասին ալ այսպիսի խուսափողական պատասխաններ տուաւ, յատկապէս հազարապետ Շէհապէտտին Պէյի 207 թուահամար 23 Յունիս 1915 թուակիր հեռագրի մասին, որ կը հաստատէ թէ Քէմալ կոտորել տուած է 3660 Հայեր. Ատեանը Ջմիւռնիայէն կանչել տուաւ նոյն հեռագիրը ստորագրող Շէհապէտտին Պէյը, որ իր կարգին խուսափողական պատասխաններ տուաւ: Այն ատեն վկայութեան կանչուեցաւ գօրավար Խալիլ Րէճայի Պէյ, որ ստացած էր Հայերու կոտորածը տեղեկագրող Շէհապէտտինի հեռագիրները:

Նախագահի հրամանով քարտուղարը կը կարդայ 207 թուահամար հեռագիրը: Շէհապէտտին կը պատասխանէ. "Ձեմ յիշեր այս խնդիրը:"

Ընդհանուր Դատախազը կը սպառնայ. "Այս վկան խուսափողական պատասխաններ տալուն համար սիտի չարտօնուի իզմիր դառնալու:" Ընդհանուր Դատախազը կ'առջարկէ Շէհապէտտին Պէյի ստորագրութեամբ հեռագիրները կարդալ Ատեանին առջեւ, եւ կ'եզրափակէ որ նոյն հեռագիրները պ ա շ տ օ ն ա կ ա ն եւ վաւերական են:

Շէհապէտտին մարմրուք կ'ունենայ կամ կ'ը ձ եւ ա ց ն է:

Յ Ա Պ Ա Ղ Ո Ւ Մ

Ներկայ ուսումնասիրութեան գլխաւոր պտճառներէն մին է 1920 էն իվեր ՄԵՌԵԱԼ ԼԵՃՈՒԻ ՎԵՐԱՍՏՈՒԱՍ ԱՐԱԲԱՏԱՌ ԽՐՔԵՐԷՆԸ: Արաբատառ Խրքերէն կարդացող եւ հասկցող անձերու թիւը, ամբողջ աշխարհի վրայ, մատով կարելի է հաշուել. հին սերունդէն արաբատառ Խրքերէնի վարժ անհատներ եւ վարպետներ հետզհետէ կ'անհետանան եւ նոր սերունդէն շատ քիչեր կը յանդգնին նոյն դժուարին լեզուին հետամուտ ըլլալ՝:

Հին Խրքերէնի դասախօսներէն ոմանք համալսարաններու մէջ արաբատառ

Թրքերէն ձեռագիր կառուարու մեծ դժուարութիւն ունին:

ՎԱԻՇՐԱԳՐՇՐՈՒ ՎԵՐԾԱՆՈՒՄ ԵՒ ԽԱՐԳՆԱՆՈՒԹԻՒՆ

Անշուշտ խօսքը ծածկագրի մասին չէ:

Արաբատառ Թրքերէնի մասնագէտի մը յաջող դաբար տրուեցաւ ձեռագիր կամ տպուած լուսատիպ օրինակը Թուրք վաւերագրերու բնագրէն կամ պաշտօնապէս վաւերացուած պատճէնէն առնուած: Առաջին մասնագէտը պաշտօն ունէ՞ր միայն կարդալու կամ վերծանելու արաբատառ Թրքերէնը եւ զայն վերածելու հայատառ կամ լատինատառ Թրքերէնի:

Առաջին մասնագէտի կարդացած վաւերագրի լուսանկարը եւ վերծանումի օրինակը տրուեցան արաբատառ Թրքերէնի երկրորդ մասնագէտի, որուն պաշտօնն էր սրբագրել սխալները, եթէ կային, եւ արաբատառ Թրքերէնէն ուղղակի թարգմանել հայերէնի, անգլերէնի կամ գաղղիերէնի:

Արաբատառ Թրքերէն վաւերագրի լուսատիպ օրինակը, առաջին մասնագէտի վերծանումը, երկրորդ մասնագէտի կատարած սրբագրութեան եւ թարգմանութեան հետ, յանձնուեցան արաբատառ Թրքերէնի երրորդ մասնագէտի մը, որ իր կարգի սրբագրեց անհրաժեշտ սխալները, եթէ կային, թէ վերծանումի եւ թէ թարգմանութեան մէջ:

Ապա, արաբատառ Թրքերէնի առաջին, երկրորդ եւ երրորդ մասնագէտները գրողին հետ միասնաբար խղճմտօրէն վերաքննեցին վերծանումը բաղդատելով արաբատառ Թրքերէնի հետ եւ կատարուած թարգմանութեան մէջ ջանացին նուազագոյնի վերածել սպրդած սխալները:

Հաճոյքով կ'ընդունուի արաբատառ Թրքերէնի մասնագէտներու, եթէ կան, գիտական դիտողութիւնները, նկատի առնելով անշուշտ 1940-1950 տասնեակի ընթացքին թրքագէտներու կողմէ հաստատուած կանոնները:

Ընթերցողը պէտք է գիտնայ որ ներկայ հատորը հայասպանութեան ամբողջ պատմութիւնը չէ, այլ մաս մը որ կը պատկերացնէ Եոզղատ գաւառի մէջ կատարուած հայասպանութիւնը Թուրք Պատերազմական Ատեանի հաւաքած պաշտօնագրերու լոյսին տակ: Հայասպանութեան ամբողջական պատմութիւնը կարելի

պիտի ըլլայ լրացնել հրատարակելով իւրաքանչիւր նահանգի եւ գաւառի հայաս-
պանութեան վաւերագրական պատմութիւնը որ նման է Եոզղատի հայասպանութեան
պատմութեան:

Ինչո՞ւ Եոզղատ եւ ոչ ուրիշ քաղաք մը կամ գաւառ մը:

Եոզղատի հայասպանութեան վաւերագրական պատմութիւնը ԱՌԱՋԻՆ ԱՆԿԱՄ
լոյս կը տեսնէ որովհետեւ Թուրք Պատերազմական Ատեանը առաջին անգամ ըլլա-
լով 5 Փետրուար 1919 ին սկսաւ Եոզղատի Հայերու տեղահանութեան եւ շարդի
պատասխանատուները դատել եւ 8 Ապրիլ 1919 ին արձակեց առաջին մահավճիռը
Թուրք պաշտօնական վաւերագրերու բովանդակութեան լոյսին տակ: Եոզղատի
կառավարիչ Քէմալ կախաղանի դատապարտուեցաւ եւ Սուլթան Մէհմէտ Զ. Վահի —
տէտտին 10 Ապրիլ 1919 ին հաստատեց մահավճիռը, եւ Քէմալ Պոլիս Պայազիտի
հրապարակին վրայ կախաղան բարձրացաւ:

Մեռնել է առաջ՝ կախաղանի վրայէն Քէմալ յայտարարեց. " Սիրելի ազգա-
կիցներ, ես Թուրք պաշտօնեայ մըն եմ: Ես գործադրեցի այն հրամանը զոր
ստացայ: Իմ պարտականութիւնս կատարեցի խղձամիտ կերպով: Կ'երդնում որ ես
ԱՆՄԵՆ ԵՄ: Ասիկա է իմ վերջին յայտարարութիւնս թէ այսօր եւ թէ վաղը:"

Դատարանութեան առաջին օրը կառավարիչ Քէմալի պաշտպան փաստաբանները
Ատեանի առջեւ բողոքեցին եւ առաջարկեցին նախապէս դատել Թուրք դահլիճի
նախարարները որոնց հրամանները գործադրուած էին:

և
ՎԱՒԵՐԿՐԵՐԷՆ ՆՄՈՅՏ ՄԸ

Կառավարիչ Քէմալ Պէյը մահուան դատապարտելու համար Թուրք Պատերազ-
մական Ատեանը գործածեց Թուրք պաշտօնական վաւերագրեր:

Պոլսոյ Հարցաքննիչ Յանձնախումբի նախագահը հետեւեալ հարցումը ուղ-
ղեց կառավարիչ Քէմալի. "Մինչեւ ԶՅ Յուլիս 1915 թուականը Պողոզլեանի եւ
գիւղերու մէջ Դ Ո Ւ Ն երեք հազար վեց հարիւր վաթսուներեք Հայեր կոտորել
տուած ես: Զօրաբաժնի հրամանատար Շէհապէտտին Պէյի կողմէ [Անգարայի Գ]
զօրաբանակին ղրկուած Զ07 թուահամար եւ ԶՅ Յուլիս 1915 թուակիր ծածկագիր
հեռագրի լուծումէն յայտնի է:

"Այս թիւը միայն մինչեւ 29 Յուլիս շարդուած Հայերու թիւն է:"

ԹԷՇՔԻՒՄԻՆԸ ՄԱՌՍՈՒՍԱ

Թուրք Պատերազմական Ատեանի տրամադրութեան տակ գտնուած Թուրք պաշտօնական վաւերագրերու համեմատ ներքին գործերու եւ արդարութեան նախարարներու հրամաններուն համաձայն կայսրութեան քաղաքներու մէջ կազմուեցան մասնայա տուկ յանձնախումբեր որոնք բանտերէն ազատ արձակեցին դատապարտուած իսլամ ոճրագործները եւ զանոնք արձանագրեցին Թէշքիւմի Մախսուսայի հրոսակներու ցանկերուն մէջ: Այս հրոսակները ղրկուեցան կանխապէս շարդավայր որոշուած տեղեր հայ կարաւանները կոտորելու եւ կողոպտելու նպատակով:

Եոզղատի բանտէն 15 Մայիս 1915 ին պաշտօնապէս ազատ արձակուեցան 65 իսլամ ոճրագործներ, որոնցմէ 51 ը մարդասպանութեան եւ միւս 14 ը գողութեան կամ աւազակութեան յանցանքով բանտարկութեան դատապարտուած էին:

Այս ոճրագործները ազատ արձակող՝ Եոզղատի կառավարիչ ձեմալ Պէյ պաշտօնապէս վկայեց թէ "Բանտերու մէջ կալանաւոր ոճրագործները գործածուեցան Հայերու կոտորածը իրագործելու համար:"

Եւ նոյն կառավարիչը կ'աւելցնէ. "Որքան ալ ես աչքերովս չտեսայ կոտորածը, սակայն իմացայ թէ Եոզղատ քաղաքէն եւ շրջակայ գիւղերէն տեղահանուած հայ կարաւանները կոտորուեցան եւ բնաջնջուեցան ոստիկաններու, հրոսակներու եւ ժողովուրդին կողմէ:"

Իսկ Թուրք Պատերազմական Ատեանը կը հաստատէ թէ բանտերէն ազատ արձակուած ոճրագործները կամ Թէշքիւմի Մախսուսայի հրոսակները հայ կարաւաններու կիներն ու մանուկները կոտորելու համար կազմակերպուած էին:

"Թէպէտեւ զօրակոչի սկիզբը [1914 Յուլիսին 4] լուր տարածուեցաւ թէ այս հրոսակները պատերազմի պիտի մասնակցէին, եւ ջանք եղաւ այդպէս համոզել միամիտները, սակայն անոնց վերաբերեալ փաստերէն եւ վաւերագրերէն կը հետեւի որ խնդրի առարկայ հրոսախումբերը կազմակերպուած էին տեղահանութեան հայ կարաւանները կոտորելու եւ բնաջնջելու նպատակով:"

Պատերազմական Ատեանի արձակած վճիռները կը հաստատեն թէ Թէշքիւմի

Մախսուսայի հրոսակներու միջոցով գործադրուեցաւ հայ ցեղի բնաշնչումը:

ԶՕՐԱՎԱՐ ՎԷՀԻՊ ՓԱՇԱՅԻ ՎԿԱՅՈՒԻՒԻՆԸ

Կովկասի ռազմաճակատի վրայ Սսմանեան զօրաբանակի հրամանատար Վէհիպ փաշայի գրաւոր վկայութեան համաձայն "Երրորդ բանակի շրջանէն ներս Պէհաէտտին Շաքիր Պէյ կազմեց եւ գործածեց մ ա ղ ու լ մ ս ա գ ո թ ն ե ռ...Գործուած բոլոր խժոժութիւնները, մարդկային չարիքները, ոճիրները եւ անկարգութիւնները Պէհաէտտին Շաքիր Պէյի ձեռքին տակ կազմակերպուած դէպքեր էին մասնաւոր ծրագրի մը համաձայն եւ իրագործուեցան մասնաշատուկ նպատակի մը համար..."

"Բացայայտ է որ Ընդհանուր Դատախազները եւ դատական պաշտօնեաները... պէտք անուղղակի մեղսակիցներ նկատուին:"

Զօրավար Վէհիպ փաշա կը հաստատէ թէ Հայերէն յափշտակուած գումարները եւ արժէքաւոր ինչքերը կանխապէս գոյացած համաձայնութեան մը համեմատ կը բաժնէին մէկ երրորդի համեմատութեամբ կուսակցութեան, կառավարութեան եւ Թէշքիւաթը Մախսուսայի միջեւ:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՐՈՒԱԿՆԵՐ

Հայերը բնաշնչելու համար կուսակցութիւնը, կառավարութիւնը եւ պաշտօնեաները ամէն տեսակ պատրուակներ կը փնտռէին, եւ եթէ չգտնէին, ամէն կերպով կը հնարէին զանոնք:

Հազարապետ Ահմէտ Պէյ կը հաստատէ թէ սուտ են գայմագամներու կողմէ ղրկուած տեղեկութիւնները. "Գաւառի սահմաններէն ներս ոչ մէկ կաթիլ արիւն թափուած է որեւէ անհատի քթէն:"

Կեսարիոյ զօրաբաժնի հրամանատար հազարապետ Շէհապէտտին Պէյ կը հեռադրէ Անգարա իր անմիջական մեթաւորին. "Պահակախումբի հրամանատարը ինծի կ'իմացնէ թէ Պողոզլեանի գաւառակին մէջ ոչ մէկ ըմբոստութեան շարժումի նշան կայ, թէ այս գաւառակի հայաբնակ գիւղերը մաքրագործուած են գայմագամի եւ գիւղախումբերու շահապններու վերահսկողութեան տակ: Ոչ թէ միայն այս գաւառակի մէջ մնացած հայ ընտանիքներու զաւակները իրենց բնակած գիւղերու մէջ չեն շրջիր

այլ նաեւ չեն համարձակիր իրենց ոտքերը դուրս դնել իրենց դռներու սեմերէն: "

Անգարայի հինգերորդ զօրաբանակի հրամանատար Միրալայ Բալիլ Ինճայի Պէյ կը հեռագրէ Շէհապէտտինի. "Ճեր հեռագիրներէն յայտնի է որ ձեր նախընթաց հաղորդագրութիւնները չ ա փ ա զ ա ն ու ա ծ է ի ն: Հարկ է այսուհետեւ չհիմնուիլ զայմագամներու տեղեկութիւններու վրայ... Ի՞նչեւ ձեր նախընթաց հաղորդագրութիւնները չափազանցութիւններ կը պարունակեն, սակայն կարելի չէ ուրանալ քանի մը հայ հրոսակներու գոյութիւնը: Կը խնդրեմ որ կորովի եւ շուտափոյթ կերպով բնաջնջէք այդ հրոսակները եւ ինծի իմացնէք անոնց թուական կարեւորութիւնը, անոնց զէնքերուն քանակը գործոնք գրաւեցիք կամ պիտի գրաւէք...":

ԿՈՏՈՐԱՄԻ ԱՐԴԱՐԱՑՈՒՄԻ ՊԱՏՐՈՒԱԿ

Քաղաքակրթուած աշխարհի աչքերուն առջեւ Հայերու բնաջնջումի սսման եան պետութեան քաղաքականութիւնը պաշտպանելու եւ արդարացնելու համար քաղաքային եւ զինուորական իշխանութիւնները շրջաբերական հրամաններ արձակած են եւ պարտադրած են արձանագրել Հայքի կողմէ գործուած ոճիրներ, հասցուցած վնասներ, արդարացնելու համար կատարուած կոտորածները:

Ինվէրի շրջաբերականը կը հրամայէ. "Բացարձակապէս անհրաժեշտ է հաւաքել եւ կանոնաւորապէս օրէ օր պահել բոլոր ապացոյցները, բոլոր վաւերագրերը որոնք բնոյթ ունին աշխարհի աչքերուն առջեւ արդարացնելու մեր վերաբերումը եւ մեր այն միջոցները գործոնք որդեգրած ենք խորտակելու համար հայ յեղափոխական շարժումը, որպէս զի անոնք հրատարակուին... Ըմբոստներու անունները, անոնց լուսանկարները, անոնց մեզի պատճառած վնասները... պէտք է անպայման ոճիրներու մատեաններուն մէջ տեղ գտնեն եւ ամէն ամիս նոյն մատեաններէն օրինակ մը դրկուի ուղղակի ընդհանուր սպայակոյտին: "

Նոյնպէս քաղաքային իշխանութիւնը ներկայացնող ներքին գործերու նախարար Թալաթ Պէյ կը դրկէ շրջաբերական հրահանգներ բոլոր նահանգներու կուսակալներուն եւ կը յանձնարարէ անոնց հաւաքել "ըմբոստական շարժումներու մասին... վաւերագրեր կամ լուսանկարներ... հայ յեղափոխական ճգումը"

ներուն վերաբերեալ..."

Միրալայ Խալիլ Րէձայի կը պատասխանէ Անգարայի կուսակալ Աթըճ Պէյի.
"Պատիւ ունիմ իմացնելու որ զօրակոչէն մինչեւ այսօր, [Անգարայի Գ] նահանգէն ներս Հայերը չեն փորձած որեւէ կարեւոր եղեռնափորձ:" Կը ղրկէ զէնքերու ցանկեր եւ խռովարար գրքեր:

ԺԳ. զօրաբաժնի հրամանատար Սիւլէյման Պէյ կը հեռագրէ իր անմիջական մեծաւորին. "Զօրակոչի սկիզբէն մինչեւ այսօր իմ իրաւասութեանս տակ ապրող Հայերէն ոչ մէկը... յարձակում կամ ըմբոստական շարժում կամ յեղափոխական գործ ըրած է:"

ՎԱՅՐԱԳՈՒԹԻՒՆՆԵՐ

Եոզղատցի երեւելի Թուրք Միւճիթի Րիճաաթի վկայութեան համաձայն ոստիկանապետ Թէվաիֆ Պէյ Գում Գույու հայաբնակ գիւղի 150 տուները եւ 650⁵ աւելի բնակիչները այրեց. "Ողջ մնացող անմեղ մանուկները դաշոյնահար ընել տուաւ եւ հաւու պէս մորթեց եւ մորթել տուաւ:"

Շրջակայ գիւղերու իսլամ բնակիչները չկարենալով դիմանալ երկինք բարձրացող աղաղակներուն, Թէվաիֆի ղրկեցին պատուիրակութիւն^ը եւ ըսին անոր. "Այս արարքը իսլամական օրէնքին հակառակ է. ահ, Թէվաիֆ, մեզ ալ սպաննէ, բայց խնայէ սա հայ կիներուն եւ մանուկներուն:"

Թէվաիֆ պատասխանած է անոնց աղաչանքին. "Դուք իմ գործերուս արգելք կ'ըլլաք. եւ քաշեց իր ատրճանակը եւ վիրաւորեց անոնցմէ ոմանք, եւ շարու նակեց իր վայրագ կոտորածը:"

Րատի Պէյ Սեբաստիոյ նախկին երեսփոխան Նուրէտտին Պէյի հետ կը շրջի Եոզղատի եւ Զորումի շրջանները. Շէյխլէր գիւղի մօտ "Լերան վրայ կը տեսնեն Հայերու դիակներ, գարշահոտ, եւ նեխած, նետուած գետերու մէջ, արդէն փտած վիճակի մէջ եւ կտոր կտոր եղած: Այս սարսափներուն առջեւ Նուրէտտին Պէյ եւ Րատի Պէյ անէծքներ կը թափեն:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Ն Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ն Ե Ր

Նահանգներու եւ գաւառներու Թուրք պաշտօնեաները որոնք կը մերժէին

գործադրել իրենց ղրկուած՝ հայասպանութեան հրամանները, առ հասարակ պաշտօնանկ կ'ըլլային եւ իրենց տեղ^{ԿԸ} բերուէին այնպիսի պաշտօնեաներ որոնք արդէն իսկ տրամադիր էին կատարելու կոտորածի հրահանգները: Անգարայի կուսակալ Մազհար Պէյ եւ Եոզղատի կառավարիչ ձէմալ Պէյ պաշտօնանկ եղան եւ իրենց տեղ բերուեցան ուրիշներ:

Մազհար Պէյ Ռատի Պէյի հարցումին կը պատասխանէ. " Ներքին գործերու նախարարութենէն ստացած հրամաններս չհասկնալ ձեւացուցի. քիտէք որ ուրիշ նահանգներու մէջ տեղահանութեան գործողութիւնները աւարտած էին մինչ ես դեռ չէի սկսած գործադրել:

"Աթըճ Պէյ հասաւ. ինծի հաղորդեց Հայերու տեղահանութեան, կոտորածի եւ բնաջնջումի վերաբերեալ ներքին գործերու նախարարութեան բերանացի հրամանը: Ես ալ իրեն ըսի. "Ո՛չ, Աթըճ Պէյ, ես կուսակալ եմ, ոչ թէ չարագործ աւագակ. կը թողում ամբողջ. եկուր դուն տեղս եւ գործադրէ կոտորածի հրամանը:"

ձէմալ Պէյ պաշտօնանկ եղաւ 5 Օգոստոս 1915 ին եւ իր տեղ բերուեցաւ Քէմալ Պէյ որ արդէն կոտորած էր Պողազլեանի Հայերը, իսկ հազարապետ Սալիմ Պէյ պաշտօնանկ եղաւ Օգոստոս 9 ին:

Գ Ա Ղ Տ Ն Ի Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

Կեսարիայէն Եէհապէտին Պէյ Անգարայի հրամանատարին հեռագրեց 27 Յուլիս 1915 ին. "Պատիւ ունիմ ձեզի հաղորդելու որ Եոզղատի զինուորագրութեան հատուածի հաղորդագրութեան համաձայն 472 Հայերու առաջին կարաւանը, առաջնորդը, քահանաները, եւ երեւելիները ի գլուխ, ղրկուեցան երջանիկ պայմաններու մէջ Եոզղատ_Ձիլէ ուղիով: Երկրորդ կարաւանը վաղը ձամբայ պիտի ելլէ եւ թիւը առանձին պիտի հաղորդուի ըստ Եոզղատի զօրակայքի եւ զինուորագրութեան նախագահի հաղորդագրութեան:"

Եոզղատի նսակատան եւ հեռագրատան տնօրէն Կիրիտլի Հիւմի պաշտօնապէս կը վկայէ թէ Անգարայի պատասխանատու քարտուղար Նէճալի Պէյ հեռագրաթեւով Սեբաստիոյ պատասխանատու քարտուղար Ղանի Պէյի կը պատուիրէ որ Եոզղատի առաջին կարաւանի Հայերուն յաւիտենական հանգիստը ապահովէ:

Հագարապետ Սալիմ Պէյ պաշտօնապէս կը վկայէ. "Առաջին կարաւանի առաջնորդի ընթացքին 472 տեղահանուած Հայերը կոտորուեցան Սեբաստիոյ կուսակալ Մուամմէր Պէյի հրամանով՝ հակառակ այն հրամաններուն որոնք տրուեցան իրեն [Թէվաիգ Պէյի Գ] Միւթէսարըձի եւ նուստ ծառայիս կողմէ: Ինքն իսկ ընկերանալ որոշեց կարաւանին եւ յանդգնեցաւ անոնց [472 Հայերու Գ] փորել տալ հասարակաց փոս մը ինձէ հայրի մէջ տարագրուածները կոտորելու եւ թաղելու համար: Երբ իմացանք այս բանը, անմիջապէս դրկեցինք զինայրերու տեղապահ ձեւատ էփէնտին ձիշղ այն վայրը եւ իրեն պաշտօն յանձնեցինք կարաւանը առաջնորդելու դէպի Սեբաստիա եւ ետ կանչեցինք գնդապետ Թէվաիգ էփէնտին: Այսպէս սով կրցանք ոճիրին առաջքն առնել եւ կարաւանը ողջ առողջ հասաւ Սեբաստիա:"

Նէճալթի կանխապէս տեղեակ ըլլալով ձէմալ եւ Սալիմ Պէյերու բացասական տրամադրութեան, ինք անձամբ հորում գնաց եւ ջանաց ուրիշ միջոցով գործադրել տալ կոտորածի հրամանը մինչեւ որ ձէմալ եւ Սալիմ Պէյերու պաշտօնանկութեան հրամանը հասնի բարձրագոյն իշխանութենէն:

Եոզղատցի Ապտիւլ ձէպպարզատէ էտիպ Պէյ, Սելեւկիոյ նախկին կառավարիչ, իր գրաւոր պաշտօնական վկայութեամբ կը հաստատէ թէ Անգարայի պատասխանատու քարտուղար Նէճալթի Պէյ հաղորդած էր Հայերու կոտորածի հրամանը Եոզղատի կառավարիչ ձէմալ Պէյի, որ մերժած էր կատարել ջարդի հրամանը:

"Կառավարութիւնը հրահանգած է Հայերը աքսորել կանխապէս որոշուած վայրեր եւ յիշեցուցեր է Նէճալթի Պէյի թէ ինք [ձէմալ Գ] չ'ուզեր գործել կառավարութեան հրամանին հակառակ, եւ թէ ինք բացարձակապէս հակառակ է Հայերու բնաջնջումին: Ասոր վրայ Նէճալթի Պէյ իրեն ըսած է. 'Թէեւ կառավարութեան տուած հրամանը երեւութապէս Հայերը աքսորել է, սակայն աքսորի բուն նպատակը Միութիւն եւ Յառաջդիմութիւն կուսակցութեան եւ ներքին գործերու նախարարութեան համար Հայերը բնաջնջել է եւ այսպէսով ծառայութիւն մատուցանել մեր հայրենիքին:"

ՋԱՐԴԱՎԱՅՐԵՐԸ ԿՈՐՈՇՈՒԻՆ ԵՒ ԿՈՏՈՐԱԾԻ ՊԱՇՏՍՆԵԱՆԵՐ ԿՐԻՄԻՆԱԼՆԻՒՆ

Եղբայրացի զօրակալի հրամանատար հազարապետ Սալիմ Պէյ դատաւորի առջեւ գրաւորապէս կը վկայէ եւ կը ~~հաստատէ~~ ^{յայտարարէ} սպանդանոց ուրոշուած վայրերը եւ կու տայ ջարդի համար նշանակուած պաշտօնեաներու անունները:

"Գայմագամ Բէմալ երբ Եղբայրացի հասաւ, Սսման Բիագիմ Պէյ Կըզըլ Գոճայի քաղաքապետի պաշտօնէն հանուեցաւ:

"Զինայրերու հրամանատարի օգնական Նուման պաշտօն ստացաւ Սորկուն գիւղաւանի Հայերը կոտորելու:

"Քաղաքապետարանի տնօրէն Ահմէտ Էփէնտիի եղբայրը Րիզա Ջավուշ պաշտօն ստացաւ Սարայի Քըջանի Հայերը ջարդելու:

"Ջարդավայր նշանակուած Բէլլէրի կոտորածներուն պաշտօնները վստահուեցան հետեւեալներուն. Եղբայրացի ուրբերու տնօրէն Մէհմէտի, Պաքըրձի Հաձի Մահմուտի, Թէվաիզատէ Ապտուլլահ Շէվքիի, զինայրերու գնդապետ Նիւթրիի, եւ Պողազլեանի դատաւոր եւ ժամանակաւոր գայմագամ Ալի Րիզայի:

"Խաշիինարի մօտակայ ջարդավայրի տնօրէնութիւնը վստահուեցաւ դարձեալ Շիւթրիի, Իսմայիլի, Ահմէտ Ջավուշի, Ջափանգատէ Իսա Պէյի ուրդի ճէրվիշ Պէյի:

Հազարապետ Սալիմ Պէյ անմիջապէս կ'աւելցնէ. "Ամէնքն ալ իրենց պարտականութիւնը կատարեցին հնազանդելով իրենց մեծաւորներէն ստացած հրամաններուն համաձայն:"

ՏԵՂԱՀԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԿՈՏՈՐԱԾ ՊԱՇՏՍՆԱՊԷՍ ՆՈՅՆԻՍԱՍՏ

Տեղահանութիւն եւ կոտորած պաշտօնապէս նոյնիմաստ բառեր էին, մէկը միւսին տեղ փոխն ի փոխ գործածուած: Բէմալի եւ Թէվաիզի հարցաքննութեան ընթացքին Հարցաքննիչ Յանձնախումբի նախագահը կարդալ կու տայ Պողազլեանի ոստիկանապետ Խուլուսի Պէյի հեռագիրը, որ "կը յայտնէ փաստացի կերպով թէ մենք "տ ե ղ ա հ ա ն ե ց ի ն ք զ ա ն ո ն ք" գործածուած է մենք "զ ա ն ո ն ք ս պ ա ն ն ե ց ի ն ք" ի տեղ:

"Ահա այս հաղորդագրութիւնը կը գործածէ "մենք տեղահանեցինք զանոնք"

ասացուածքը "Մենք ջարդեցինք զանոնք" իմաստով: "Բնաշնչեցինք" իմաստով կը գործածուի եղեր "Տեղահանեցինք" բառը:

Քէմալի եւ թէվախիզի կը հարցուի. "Ինչ ըսել է իրենց աքսորավայրը ղրկեցինք: "Ասոր իմաստը կոտորել եւ բնաշնչել է միթէ":"

Պողազլեանի զօրակայքի գնդապետ Մուսթաֆա կը հեռագրէ Անգարայի հրամանատարին. "Այս գիշեր... ձեռք անցուած Հայերէն 14 հոգի իրենց աքսորավայրը ղրկուեցան:"

Անգարայի զօրաբանակի հրամանատար Խալիլ Րէձայի հեռագրով կը հարցնէ. "Հաճէի՞ք իմացնել թէ վերոյիշեալները ինչ պատճառի համար եւ ո՞ր ղրկուեցան:"

Գնդապետ Մուսթաֆա կը պատասխանէ. "Պատիւ ունիմ ձեզի իմացնելու թէ վերոյիշեալ Հայերը կասկածելի ըլլալուն համար... տասնապետ Հիւսէին Աւնիի հսկողութեամբ ջարդուեցան:"

ԳԵՐՄԱՆ ԶՕՐԱՎԱՐՆԵՐ ԿԸ ՍՏՈՐԱԳՐԵՆ ՏԵՂԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Օսմանեան ընդհանուր սպայակոյտէն Գերման զօրավարներ կը ստորագրեն Հայերու տեղահանութեան հրահանգները. Անատոլուի Երկաթուղիի գծին ընդհանուր Տնօրէն Հեռ Ժ. Կիւնթէր միամտօրէն կը դիմէ Օսմանեան Սպայակոյտի պետ զօրավար Ժրից Պրոնզարդ Ժոն Շէլլէնտորփի, առանց գիտնալու որ ան ալ իր կարգին ստորագրած էր Հայերու տեղահանութեան հրամանը: Հեռ Կիւնթէր կ'ըսէ. "Մենք մանրամասնօրէն ծեծեցինք այս հարցը զօրավար Ժոն Պրոնզարդի հետ..."

"Հեռ Պրոնզարդ չմերժեց մեր կարծիքները որոնք հակառակ են Խուրթ կառավարութեան որոշումներուն, սակայն ան մատնանիշ ըրաւ այս խնդիրը, եւ թէ Հեռ Պրոնզարդ, իր [Պրոնզարդի Գ] մասնագէտ կցորդը, նկատեց թէ կարելի է գործադրել նախատեսուած ծրագիրը [Երկաթուղիի գծին հայ պաշտօնեաները եւ աշխատակորները տարագրել Գ]: Դեռ աւելի, ան խոստացաւ խորհրդակցիլ Գերման Դեսպանին հետ եւ գինուորական կցորդին հետ այս հարցին շուրջ... Ան այն կարծիքէն է որ եթէ ինք որոշէ հակառակ պայքար տանիլ այդ միջոցառումին դէմ,

ինք պէտք է միեւնոյն ատեն պատրաստուի հրաժարիլ եթէ չկատարէ իր տեսակէտը: "Հեռ Պոլթրիխ չբողոքեց պատերազմական նախարարութեան՝ յանձնարումբին առած որոշումներուն դէմ, այլ ինքն իսկ թոյլատրեց որ իր իսկ ստորագրութեամբ այս որոշումները վաւերացուին:"

Հեռ Կիւնթէր կ'աւելցնէ. "Օր մը մեր թշնամիները շատ մեծ գնով ձեռք պիտի անցնեն այս վաւերագիրը որովհետեւ մեր զինուորական առաքելութեան անդամներէն մէկուն ստորագրուելիք պիտի կարենան ապացուցանել թե Գերմանները հառապարութիւն եւ զինուորական իշխանութիւն Գ ոչ թէ միայն Հայերու դէմ եղած հալածանքները կասեցնելու համար ոչինչ ըրին, այլ նաեւ այդ մասին իրենցմէ տրուեցան որոշումներ, այսինքն՝ իրենց կողմէ ստորագրուեցան:

"Իրողութիւնը այն է որ վաւերագիրը, որու մասին ջաշ պիտի լսուուի ապագային, կը կրէ ոչ թէ թրքական այլ գերմանական ստորագրութիւն մը, որ արժէք պիտի ունենայ նաեւ թուրքերու համար, ինչպէս զինուորական գործավարը մատնանշեց կծու բառերով:"

Պ Ա Շ Տ Ս Ն Ա Կ Ա Ն Կ Ա Հ Ա Յ Ո Ւ Յ Ա Կ

Հանրութեան դատաստանին կը յանձնենք հայ ընտանիքէ մը գրաւուած տան գոյքերու պաշտօնական կահացուցակը գնահատուած թուրք մասնագէտներու կողմէ եւ հաստատուած բազմաթիւ ստորագրութիւններով:

Թուրք Պատերազմական Ատեանը կարդալ կու տայ նոյն կահացուցակը Բէմալի, Թէվախի եւ Կէյեազի ներկայութեան: Ան կը բովանդակէ 470 կտոր առարկաներ գնահատուած 15,120 դահեկանի: Ատեանի նախագահը կը հարցնէ Բէմալի. "Թէվախի եւ Կէյեազ Պէյերը ակումբի անունով գնահատեր են ապրանքներու գինը, եւ Դ Ո Ւ Ն անկէ մեծ քանակութեամբ ապրանքներ առերես ԱՌԱՆՑ ՀԻՆԳ ՓԱՐԱ ՎՃԱՐԵԼՈՒ:"

Հայ վաճառական Աթանասեան տեղահանուած եւ կոտորուած է իր ընտանիքի անդամներուն հետ: Անոր տունը եւ կարասիները կը գրաւեն եւ Երիտասարդ թուրքերու ակումբի կը վերածեն:

ԵՈՋՂԱՏԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՆԵՐՍԷՍ ԴԱՆԻԷԼԵԱՆԻ

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՄԱՏԱՆՈՆ

Թուրք Պատերազմական Ատեանը մասնաւորապէս կը զբաղի նաեւ Եոզղատի Առաջնորդ Ներսէս Դանիէլեանի եպիսկոպոսական մատանիով: Նախագահը կը հրամայէ մասնաւոր քննութիւն կատարել թէ ո՞ր եւ ե՞րբ մեռաւ առաջնորդը. թէ ո՞վ էր որ անոր մատէն եպիսկոպոսական մատանին հանեց, թէ ե՞րբ մատանին աճուրդով ծախուեցաւ եւ ո՞վ գնեց զայն որքան վճարելով:

Նախագահը կը հրամայէ. "Առաջնորդը ո՞ր սպանուեցաւ... Անոր մատի մատանին ի՞նչպէս եւ ո՞ր անցաւ էվզաձի տնօրէն Կէյի ձեռքը... *Ննեցէք ստուգութիւնը եւ անմիջապէս հեռագրով իմացուցէք. թուղթերն ու վաւերագրերը շուտով մեզի ղրկեցէք:"

Եոզղատի կառավարիչը քննութիւն կատարելէ ետք կը հաղորդէ Պատերազմական Ատեանին. "Առաջնորդի մատի մատանին" Լ Ո Ւ Մ Ա Ր Բ Ի Յ Ա Ն Վ Ն Ա Ռ Ո ՒՄ Բ Ի կազմակերպած աճուրդի ընթացքին երկու հազար երեք հարիւր քսան դահեկանի [812 տուար եւ յիսուն սէնթի 9] ծախուած է Կէյի պատասխանատուութեան տակ:"

Կէյի թուրք Պատերազմական Ատեանի նախագահի հարցումին պատասխանեց թէ ինք աճուրդէն գնած էր եպիսկոպոսական մատանին... անուշտ առանց դահեկան մը վճարելու:

Կ Ո Տ Ո Ր Ո Ւ Ա Մ Հ Ա Յ Ե Ր Ո Ւ Կ Ե Ն Ա Ց

Տիկին Ազնիւ Իբրանոսեան կոտորածէն ազատուեցաւ եւ հաշուակալ Վէհպի Պէյի տան մէջ մնաց ժամանակ մը: Կառավարիչ Բէմալ Պէյ եւ իր ժողովականները ամէն գիշեր Վէհպի Պէյի տան մէջ "Հայերու կենաց բաժակներ կը բարձրացնէին" եւ կ'որոշէին երկրորդ օրուան իրենց կատարելիք գործերը: Մինչ Տիկին Ազնիւ կիներու յարկաբաժինին մէջ մտիկ կ'ընէր անոնց խօսակցութիւնը եւ առած որոշումները: Ան Պատերազմական Ատեանի առջեւ կը վկայէ. "Ես պահուշտած էի այդ տան մէջ... Ամէն օր Բէմալ եւ Թէվֆիգ Վէհպիի տան այրերու յատկացուած բաժնին մէջ կը խորհրդակցէին..."

"Քէմալ . Այս կինը սուտ կը խօսի . . .

"Նախագահ . /Քէմալի կը հարցնէ/ Օղիի սեղաններու շուրջ խխախախտներ չսարքեցի՞ք :

"Ազնիւ . Այո՞, ես չեմ ^{ուրանար} ~~միտնար~~ /եղած բարիքը, բայց չեմ կրնար մոռնալ միեւնոյն ատեն որ անոնց հետ քու [Վէհաի Պէյի Գ] սենեակին մէջ կը խմէիք իրարու կրկնելով "Հայերու կենաց . . . ես դրան ետեւէն մտիկ կ'ընէի :"

Աւելի մանրամասնութիւններ փափաքողները կրնան կարդալ "Եոզղատի Հայասպանութեան Վաւերագրական Պատմութիւնը" որ անգլերէնի պարզ համառօտութիւնն է : Հայերէն հատորը գրուած էր տարիներ առաջ, Պէյրուսի մէջ Եոզղատի հայրենակցական միութեան ատենապետին խնդրանքով՝ իբր յաւելուած նոյն գաւառի պատմագրքին, որուն տպագրութիւնը կարելի չեղաւ շարունակել Պէյրուսի եղբայրսպան կռիւներու հետեւանքով :

Եոզղատի Հայասպանութեան Վաւերագրական Պատմութիւնը անգլերէն լեզուով գրուած է, մօտաւորապէս հազար էջերէ կը բաղկանայ : Հայերէն գրքէն գոյանալիք գումարը պիտի յատկացուի անգլերէնի հրատարակութեան :

Ապրիլ 24 էն մինչեւ Մայիսի վերջ եղած կանխիկ ապսպրանքները պիտի արժեն միայն 27, 50 տուար առաքումի ծախքով միասին : Մայիս 31 էն ետք գրքի գինը պիտի ըլլայ 35 տուար : *Իսթանբուլէն Կոնստանտնուպոլիս 32 և 42;*

Թող փաթաթողները իրենց չէքերը գրեն Գրիկէրօի անունով եւ դրկեն հետեւեալ հասցէին

K R I E G E R
P.O. Box 357
Forest Hills, N.Y. 11375

Սահմանափակ օրինակներ հրատարակուած են այս գրքէն որուն մէջ փոքր պաշտօնական վաւերագրերը միայն կը խօսին :

ՇՈՎՀԱՏԻ ՀԱՅԱՍՏԱՆՈՒԹԵԱՆ ՎԱԽԵՐԱԳՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՆԸ

Եռզատի Հայաստանութեան վաւերագրական Պատմութիւնը գիրք մըն էնման ուրիշ գիրքերու, գեղապիպ, 468 էջերէ բաղկացած:

Սակայն ան բոլորովին տարբեր է մինչեւ հիմա հրատարակուած բոլոր գիրքերէն իր մասնայատուկ բովանդակութեամբ: Ամէն ինչ անոր մէջ նորութիւն է. ամէն ինչ յայտնութիւն է ոչ թէ միայն հայութեան այլ նաեւ ամբողջ միջազգային պատմութեան եւ իրաւարոհութեան համար:

Այս հատորը գիտական ուսումնասիրութիւն մըն է հրատարակուած հայաստանութեան 65րդ տարեդարձին պիթիւ, լոկ թուրք պաշտօնական վաւերագրերու լոյսին տակ բանաձեւուած եւ հանրութեան դատաստանին յանձնուած:

Այս գրքի թուրք պաշտօնական վաւերագրերու վաւերականութիւնը հաստատուած է նոյնինքն թուրք Պատերազմական Արտակարգ Ատեանի կողմէ, որ 1919-1921 տարիներու ընթացքին Հայերու բռնի տեղահանութեան եւ կոտորածի պատասխանատուները դատեց, Սսմանեան քաղաքային եւ զինուորական պատժագրքերու տրամադրութեան համաձայն վճիռներ արձակեց գործածելով թուրք պաշտօնական վաւերագրերու բովանդակութիւնը: Այս վճիռներէն շատեր հրատարակուած են թուրք Պատերազմական Ատեանի պաշտօնաթերթ թԱԿՈՒԻՄԸ ՎԱԳԱՅԻ ՆԻՎԱՆԸ ՀԱՐՊԻ ԷՍՐԻԻ ՄՈՒՀԱԿ ԷՄԱԹԸ ԶԱՊԻՍ ԺԵՐԻՏԷՄԻ ի յաջորդական թիւերուն մէջ:

ՎԱԽԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՆ

Պոլսոյ զօրակայքի հրամանատար եւ թէշքիլաթը Մարսուսայի վարիչ հազարապետ ձեւատ Պէյ կը փորձէ ուրանալ: Ատեանի նախագահը կարգալ կու տայ հեռագիրներ, որոնցմէ երեքը կը կրէին անոր ստորագրութիւնը:

Նախագահը կը հարցը ձեւատ Պէյի. "Այս երեք առաջին հեռագիրներուն ստորագրութիւնը ձեռն է:

"ձեւատ Պէյ. քննել է ետք ստորագրութիւնները, այդպէս կը մտածեմ: Անոնք կրնան իմս ըլլալ: Զեմ յիշեր, ժամանակ անցած է:"

Ատեանի նախագահը չի գոհանար այս տատամսոտ խոստովանութեամբ. կրկին

կը հարցնէ ամբաստանեալին. " Այս հեռագրին վարի կողմը լուսանցքի մէջ ու
թագրութիւն մը կայ. "այսպիսի կարեւոր հեռագիրներու բնագիրները պէտք է
ետ վերադարձուին կանոնի համաձայն: Կ'ըսես զանոնք պահելու համար 10էջքիլաթը
Մախսուսայի թղթածրարներու մէջ: " Ինչ ըսել կ'ուզես:

"Ճեւատ Պէյ. Ինչպէս..."

Նախագահի հրամանով քարտուղարը կը կարդայ. "10էջքիլաթը Մախսուսայի կա-
նոնին հետեւելով անհրաժեշտ է հեռագիրներու բնագիրները ետ վերադարձնել...

"Նախագահ. ասիկա ձեր ձեռագիրն է:

"Ճեւատ Պէյ. Նայիմ, Տէր Իմ, բնագիրները պէտք է ըլլան, վերադարձուած
եւ թղթածրարներու մէջ դասաւորուած ըլլալու են:

"Նախագահ. լուսանցքի վարի գրութիւնը ձեր ձեռագիրը չէ:

"Ճեւատ Պէյ. ձեռագիրն իմս պէտք ըլլայ...

"Նախագահ. Թող անգամ մըն ալ նայի:

"Ճեւատ Պէյ. այս Զեռագիրն ԻՄՍ է...

"Նախագահ. անգամ մըն ալ ցոյց տուէք:

"Ճեւատ Պէյ. ասիկա իմ ձեռագիրս է..."

Ուրիշ օրինակ մը.

Թուրք Պատերազմական Ատենի առջեւ ամբաստանեալներ եւ երբեմն ալ վկա-
ներ կ'ուրանան առ հասարակ գրութիւնն ու ստորագրութիւնը:

Կառավարիչ Քէմալ Պէյի գրաւոր հարցաքննութիւնը տեղի ունեցած էր 15
եւ 16 Դեկտեմբեր 1918 ին: Այդ առթիւ ան յայտնութիւն մը կատարած էր թէ
Հայերու տեղահանութեան վերաբերեալ հրամաններէն ոմանք ա յ ռ ու ա ծ էին
ընթերցումէն ետք՝ ղրկողի բացայայտ հրամանով:

Ատենի նախագահը կը հարցնէ կառավարիչ Քէմալի. "Նախնական հարցաքննու-
թեան մէջ ըսած էք որ տեղահանութեան թուղթերու մէկ մասը այրած ենք. ասիկա
ձեր ստորագրութեան տակ է. ո՞ր թուղթերը այրեցիք:

"Քէմալ. ես այդ վկայութիւնը գրած ատենսարդէն ձամբորդութենէ նոր եկած,

յոզնած վիճակ ունէի. ածապարանօք գրեցի, որովհետեւ միջոց չտուին հանգստա- նալու. ատիկա ձիղդ չէ:

"Ընդհանուր Դատախազ. ես այդ քննիչ մարմնոյ մէջ էի. այս հարցումներուն պատասխանը երեք չորս ժամէն գրեց. հետեւաբար իր այս խօսքը ձիղդ չէ:"

Երբ Քէմալ ուրիշ վաւերագրերու մասին ալ այսպիսի խուսափողական պատաս- խաններ տուաւ, յատկապէս հազարապետ Շէհապէտտին Պէյի 207 թուահամար 29 Յու- լիս 1915 թուակիր հեռագրի մասին, որ կը հաստատէ թէ Քէմալ կոտորել տուած է 8660 չայեր. Ատեանը Ձմիւռնիայէն կանչել տուաւ նոյն հեռագիրը ստորագրող Շէհապէտտին Պէյը, որ իր կարգին խուսափողական պատասխաններ տուաւ: Այն ատեն վկայութեան կանչուեցաւ զօրավար Խալիլ Ռէճայի Պէյ, որ ստացած էր չայերու կոտորածը տեղեկագրող Շէհապէտտինի հեռագիրները:

Նախագահի հրամանով քարտուղարը կը կարդայ 207 թուահամար հեռագիրը: Շէհապէտտին կը պատասխանէ. "Զեմ յիշեր այս խնդիրը:"

Ընդհանուր Դատախազը կը սպառնայ. "Այս վկան խուսափողական պատասխաններ տալուն համար պիտի շարտօնուի իզմիր դառնալու:" Ընդհանուր Դատախազը կ'առա- ջարկէ Շէհապէտտին Պէյի ստորագրութեամբ հեռագիրները կարդալ Ատեանին առջեւ, եւ կ'եզրափակէ որ նոյն հեռագիրները պ ա շ տ ո ն ա կ ա ն եւ վաւերական են:

Շէհապէտտին մարմրուք կ'ունեայ կամ կը ձեւացնէ:

Յ Ա Պ Ա Ղ Ո Ւ Մ

Ներկայ ուսումնասիրութեան գլխաւոր պատճառներէն մին է 1920 էն իվեր ՄԵՌԵԱԼ ԼԵՃՈՒԻ ՎԵՐԱՍՈՒԱՍ ԱՐԱԲԱՏԱՌ ԹՐՔԵՐԷՆԸ: Արաբատառ Թրքերէն կարդացող եւ հասկցող անձերու թիւը, ամբողջ աշխարհի վրայ, մատով կարելի է հաջուել. հին սերունդէն արաբատառ Թրքերէնի վարժ անհատներ եւ վարպետներ հետզհետէ կ'անհետանան եւ նոր սերունդէն շատ քիչեր կը յանդգնին նոյն դժուարին լեզուին հետամուտ ըլլալ՝:

Հին Թրքերէնի դասախօսներէն ոմանք համալսարաններու մէջ արաբատառ

Թրքերէն ձեռագիր կառուցու մեծ դժուարութիւն ունին:

ՎԱԻՇՐԱԳՐՇՐՈՒ ՎԵՐՍԱՆՈՒՄ ԵՒ ԽԱՐԿՆԱՆՈՒԹԻՒՆ

Անշուշտ խօսքը ծածկագրի մասին չէ:

Արաբատառ Թրքերէնի մասնագէտի մը յաջողաբար տրուեցաւ ձեռագիր կամ տպուած լուսատիպ օրինակը Թուրք վաւերագրերու բնագրէն կամ պաշտօնապէս վաւերացուած պատճէնէն առնուած: Առաջին մասնագէտը պաշտօն ունէ՞ր միայն կարողալու կամ վերծանելու արաբատառ Թրքերէնը եւ զայն վերածելու հայատառ կամ լատինատառ Թրքերէնի:

Առաջին մասնագէտի կարգացած վաւերագրի լուսանկարը եւ վերծանումի օրինակը տրուեցան արաբատառ Թրքերէնի երկրորդ մասնագէտի, որուն պաշտօնն էր սրբագրել սխալներ, եթէ կային, եւ արաբատառ Թրքերէնէն ուղղակի թարգմանել հայերէնի, անգլերէնի կամ գաղղիերէնի:

Արաբատառ Թրքերէն վաւերագրի լուսատիպ օրինակը, առաջին մասնագէտի վերծանումը, երկրորդ մասնագէտի կատարած սրբագրութեան եւ թարգմանութեան հետ, յանձնուեցան արաբատառ Թրքերէնի երրորդ մասնագէտի մը, որ իր կարգի սրբագրեց անհրաժեշտ սխալները, եթէ կային, թէ վերծանումի եւ թէ թարգմանութեան մէջ:

Ապա, արաբատառ Թրքերէնի առաջին, երկրորդ եւ երրորդ մասնագէտները գրողին հետ միասնաբար խղճմտօրէն վերաքննեցին վերծանումը բաղադատելով արաբատառ Թրքերէնի հետ եւ կատարուած թարգմանութեան մէջ ջանացին նուազագոյնի վերածել սպրդած սխալները:

Հաճոյքով կ'ընդունուի արաբատառ Թրքերէնի մասնագէտներու, եթէ կան, գիտական դիտողութիւնները, նկատի առնելով անշուշտ 1940-1950 տասնեակի ընթացքին թրքագէտներու կողմէ հաստատուած կանոնները:

Ընթերցողը պէտք է դիտնայ որ ներկայ հատորը հայասպանութեան ամբողջ պատմութիւնը չէ, այլ մաս մը որ կը պատկերացնէ Եոզղատ գաւառի մէջ կատարուած հայասպանութիւնը Թուրք Պատերազմական Ատենի հաւաքած պաշտօնագրերու լոյսին տակ: Հայասպանութեան ամբողջական պատմութիւնը կարելի

պիտի ըլլայ լրացնել հրատարակելով իւրաքանչիւր նահանգի եւ գաւառի հայաս-
պանութեան վաւերագրական պատմութիւնը որ նման է Եոզղատի հայասպանութեան
պատմութեան:

Ինչո՞ւ Եոզղատ եւ ոչ ուրիշ քաղաք մը կամ գաւառ մը:

Եոզղատի հայասպանութեան վաւերագրական պատմութիւնը ԱՌԱՋԻՆ ԱՆԿԱՄ
լոյս կը տեսնէ որովհետեւ Թուրք Պատերազմական Ատեանը առաջին անգամ ըլլա-
լով 5 Փետրուար 1919 ին սկսաւ Եոզղատի Հայերու տեղահանութեան եւ շարդի
պատասխանատուները դատել եւ 8 Ապրիլ 1919 ին արձակեց առաջին մահավճիռը
Թուրք պաշտօնական վաւերագրերու բովանդակութեան լոյսին տակ: Եոզղատի
կառավարիչ Քէմալ կախաղանի դատապարտուեցաւ եւ Սուլթան Մէհմէտ Զ. Վահի -
տէտտին 10 Ապրիլ 1919 ին հաստատեց մահավճիռը, եւ Քէմալ Պոլիս Պայազիտի
հրապարակին վրայ կախաղան բարձրացաւ:

Մենեւիլ է առաջ՝ կախաղանի վրայէն Քէմալ յայտարարեց. " Սիրելի ազգա-
կիցներ, ես Թուրք պաշտօնեայ մըն եմ: Ես գործադրեցի այն հրամանը զոր
ստացայ: Իմ պարտականութիւնս կատարեցի խղճամիտ կերպով: Կ'երդնում որ ես
ԱՆՄԵՂ ԵՄ: Ասիկա է իմ վերջին յայտարարութիւնս թէ այսօր եւ թէ վաղը: "

Դատարարութեան առաջին օրը կառավարիչ Քէմալի պաշտպան փաստաբանները
Ատեանի առջեւ բողոքեցին եւ առաջարկեցին նախապէս դատել Թուրք ղահլիճի
նախարարները որոնց հրամանները գործադրուած էին:

Ա ՎԱԿԱՐԿՐԵՐԷՆ ՆՄՈՅՇ ՄԸ

Կառավարիչ Քէմալ Պէյը մահուան դատապարտելու համար Թուրք Պատերազ-
մական Ատեանը գործածեց Թուրք պաշտօնական վաւերագրեր:

Պոլսոյ Հարցաքննիչ Յանձնախումբի նախագահը հետեւեալ հարցումը ուղ-
ղեց կառավարիչ Քէմալի. "Մինչեւ ԶՅ Յուլիս 1915 թուականը Պողազլեանի եւ
գիւղերու մէջ Դ Ո Ի ն երեք հազար վեց հարիւր վաթսուէն Հայեր կոտորել
տուած ես: Զօրաբաժնի հրամանատար Շէհապէտտին Պէյի կողմէ [Անգարայի Գ]
զօրաբանակին ղրկուած Զ07 թուահամար եւ ԶՅ Յուլիս 1915 թուակիր ծածկագիր
հեռագրի լուծումէն յայտնի է:

"Այս թիւը միայն մինչեւ 29 Յուլիս շարդուած Հայերու թիւն է:"

ԹԵՃՔԻՆԱԽԸ ՄԱԽՍՈՒՍԱ

Թուրք Պատերազմական Ատեանի տրամադրութեան տակ գտնուած Թուրք պաշտօնական վաւերագրերու համեմատ ներքին գործերու եւ արդարութեան նախարարներու հրամաններուն համաձայն կայսրութեան քաղաքներու մէջ կազմուեցան մասնայատուկ յանձնախումբեր որոնք բանտերէն ազատ արձակեցին դատապարտուած իսլամ ոճրագործները եւ զանոնք արձանագրեցին Թէշքիւաթր Մախսուսայի հրոսակներու ցանկերուն մէջ: Այս հրոսակները ղրկուեցան կանխապէս ջարդավայր որոշուած տեղեր հայ կարաւանները կոտորելու եւ կողոպտելու նպատակով:

Եոզղատի բանտէն 15 Մայիս 1915 ին պաշտօնապէս ազատ արձակուեցան 65 իսլամ ոճրագործներ, որոնցմէ 51 ը մարդասպանութեան եւ միւս 14 ը գողութեան կամ աւազակութեան յանցանքով բանտարկութեան դատապարտուած էին:

Այս ոճրագործները ազատ արձակող՝ Եոզղատի կառավարիչ ձեմալ Պէյ պաշտօնապէս վկայեց թէ "Բանտերու մէջ կալանաւոր ոճրագործները գործածուեցան Հայերու կոտորածը իրագործելու համար:"

Եւ նոյն կառավարիչը կ'աւելցնէ. " Որքան ալ ես աչքերովս չտեսայ կոտորածը, սակայն իմացայ թէ Եոզղատ քաղաքէն եւ շրջակայ գիւղերէն տեղահանուած հայ կարաւանները կոտորուեցան եւ բնաջնջուեցան ոստիկաններու, հրոսակներու եւ ժողովուրդին կողմէ:"

Իսկ Թուրք Պատերազմական Ատեանը կը հաստատէ թէ բանտերէն ազատ արձակուած ոճրագործները կամ Թէշքիւաթր Մախսուսայի հրոսակները հայ կարաւաններու կիներն ու մանուկները կոտորելու համար կազմակերպուած էին:

"Թէպէտեւ զօրակոչի սկիզբը 1914 Յուլիսին 4] լուր տարածուեցաւ թէ այս հրոսակները պատերազմի պիտի մասնակցէին, եւ ջանք եղաւ այդպէս համոզել միամիտները, սակայն անոնց վերաբերեալ փաստերէն եւ վաւերագրերէն կը հետեւի որ խնդրի առարկայ հրոսախումբերը կազմակերպուած էին տեղահանութեան հայ կարաւանները կոտորելու եւ բնաջնջելու նպատակով:"

Պատերազմական Ատեանի արձակած վճիռները կը հաստատեն թէ Թէշքիւաթր

Մախսուսայի հրոսակներու միջոցով գործադրուեցաւ հայ ցեղի բնաջնջումը:

ԶՕՐԱՎԱՐ ՎԷՀԻՊ ՓԱՇԱՅԻ ՎԿԱՅՈՒԽԻՒՆԸ

Կովկասի ռազմաձկատի վրայ Սսմանեան զօրաբանակի հրամանատար Վէհիպ փաշայի գրաւոր վկայութեան համաձայն "Երրորդ բանակի շրջանէն ներս Պէհաէտտին Շաքիր Պէյ կազմեց եւ գործածեց մ ա ղ ու ւ մ ս ա գ ո թ ն ե ռ...Գործուած բոլոր խժոժութիւնները, մարդկային չարիքները, ոճիրները եւ անկարգութիւնները Պէհաէտտին Շաքիր Պէյի ձեռքին տակ կազմակերպուած դէպքեր էին մասնաւոր ծրագրի մը համաձայն եւ իրագործուեցան մասնաշատուկ նպատակի մը համար..."

"Բացայայտ է որ Ընդհանուր Դատախազները եւ դատական պաշտօնեաները... պէտք անուղղակի մեղսակիցներ նկատուին:"

Զօրավար Վէհիպ փաշա կը հաստատէ թէ Հայերէն յափշտակուած գումարները եւ արժէքաւոր ինչքերը կանխապէս գոյացած համաձայնութեան մը համեմատ կը բաժնէին մէկ երրորդի համեմատութեամբ կուսակցութեան, կառավարութեան եւ Թէշքիւաթը Մախսուսայի միջեւ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՐՈՒԻՍԵԱՆ ՊԱՏՐՈՒԻՍԵՐ

Հայերը բնաջնջելու համար կուսակցութիւնը, կառավարութիւնը եւ պաշտօնեաները ամէն տեսակ պատրուակներ կը փնտռէին, եւ եթէ չգտնէին, ամէն կերպով կը հնարէին զանոնք:

Հազարապետ Ահմէտ Պէյ կը հաստատէ թէ սուտ են գայմագամներու կողմէ ղրկուած տեղեկութիւնները. "Գաւառի սահմաններէն ներս ոչ մէկ կաթիլ արիւն թափուած է որեւէ անհատի քթէն:"

Կեսարիոյ զօրաբաժնի հրամանատար հազարապետ Շէհապէտտին Պէյ կը հեռադրէ Անգարա իր անմիջական մեղաւորին. "Պահակախումբի հրամանատարը ինծի կ'իմացնէ թէ Պողազլեանի զաւառակին մէջ ոչ մէկ ըմբոստութեան շփոթումի նշան կայ, թէ այս զաւառակի հայաբնակ գիւղերը մաքրագործուած են գայմագամի եւ գիւղախումբերու շահապներու վերահսկողութեան տակ: Ոչ թէ միայն այս զաւառակի մէջ մնացած հայ ընտանիքներու զաւակները իրենց բնակած գիւղերու մէջ չեն շրջիր

այլ նաեւ չեն համարձակիր իրենց ոտքերը դուրս դնել իրենց դռներու սեմերէն: "

Անգարայի հինգերորդ գօրաբանակի հրամանատար Միրալայ Խալիլ Իէճայի Պէյ կը հեռագրէ Շէհապէտինի. "Ճեր հեռագիրներէն յայտնի է որ ձեր նախընթաց հաղորդագրութիւնները չափազանուած էին: Հարկ է այսուհետեւ շահմնուիլ գայմագամներու տեղեկութիւններու վրայ... Ի՞նչեւ ձեր նախընթաց հաղորդագրութիւնները չափազանցութիւններ կը պարունակեն, սակայն կարելի չէ ուրանալ քանի մը հայ հրոսակներու գոյութիւնը: Կը խնդրեմ որ կորովի եւ շուտափոյթ կերպով բնաջնջէք այդ հրոսակները եւ ինծի իմացնէք անոնց թուական կարեւորութիւնը, անոնց գէնքերուն քանակը գործնք գրաւեցիք կամ պիտի գրաւէք...":

ԿՈՏՈՐԱՄԻ ԱՐԴԱՐԱՑՈՒՄԻ ՊԱՏՐՈՒԽԿ

Քաղաքակրթուած աշխարհի աչքերուն առջեւ Հայերու բնաջնջումի սսման եան պետութեան քաղաքականութիւնը պաշտպանելու եւ արդարացնելու համար քաղաքային եւ զինուորական իշխանութիւնները շրջաբերական հրամաններ արձակած են եւ պարտադրած են արձանագրել Հայքի կողմէ գործուած ոճիրներ, հասցուցած վնասներ, արդարացնելու համար կատարուած կոտորածները:

Էնվէրի շրջաբերականը կը հրամայէ. "Բացարձակապէս անհրաժեշտ է հաւաքել եւ կանոնաւորապէս օրէ օր պահել բոլոր ապացոյցները, բոլոր վաւերագրերը որոնք բնոյթ ունին աշխարհի աչքերուն առջեւ արդարացնելու մեր վերաբերումը եւ մեր այն միջոցները գործնք որդեգրած ենք խորտակելու համար հայ յեղափոխական շարժումը, որպէս զի անոնք հրատարակուին... Ըմբոստներու անունները, անոնց լուսանկարները, անոնց մեզի պատճառած վնասները... պէտք է անպայման ոճիրներու մատեաններուն մէջ տեղ գտնեն եւ ամէն ամիս նոյն մատեաններէն օրինակ մը դրկուի ուղղակի ընդհանուր սպայակոյտին: "

Նոյնպէս քաղաքային իշխանութիւնը ներկայացնող ներքին գործերու նախարար Խալաթ Պէյ կը դրկէ շրջաբերական հրահանգներ բոլոր նահանգներու կուսակալներուն եւ կը յանձնարարէ անոնց հաւաքել "ըմբոստական շարժումներու մասին... վաւերագրեր կամ լուսանկարներ... հայ յեղափոխական ճգումը"

ներուն վերաբերեալ..."

Միրալայ Խալիլ Րէձայի կը պատասխանէ Անգարայի կուսակալ Աթըճ Պէյի.
"Պատիւ ունիմ իմացնելու որ զօրակոչէն մինչեւ այսօր, [Անգարայի Գ] նահանգէն ներս Հայերը չեն փորձած որեւէ կարեւոր եղեռնափորձ:" Կը ղրկէ զէնքերու ցանկեր եւ խռովարար գրքեր:

ԺԳ. զօրաբաժնի հրամանատար Սիւլէյման Պէյ կը հեռագրէ իր անմիջական մեծաւորին. "Զօրակոչի սկիզբէն մինչեւ այսօր իմ իրաւասութեանս տակ ապրող Հայերէն ոչ մէկը... յարձակում կամ ըմբոստական շարժում կամ յեղափոխական գործ ըրած է:"

ՎԱՅՐԱԳՈՒԹԻՒՆՆԵՐ

Եոզղատցի երեւելի թուրք Միւնիթէրի Ռիճաթի վկայութեան համաձայն ոստիկանապետ Թէվաիֆ Պէյ Գում Գույու հայաբնակ գիւղի 150 տուները եւ 650⁵ աւելի բնակիչները այրեց. "Ողջ մնացող անմեղ մանուկները դաշոյնահար ընել տուաւ եւ հաւու պէս մորթեց եւ մորթել տուաւ:"

Շրջակայ գիւղերու իսլամ բնակիչները չկարենալով դիմանալ երկինք բարձրացող աղաղակներուն, Թէվաիֆի ղրկեցին պատուիրակութիւն² եւ ըսին անոր. "Այս արարքը իսլամական օրէնքին հակառակ է. ահ, Թէվաիֆ, մեզ ալ սպաննէ, բայց խնայէ սա հայ կիներուն եւ մանուկներուն:"

Թէվաիֆ պատասխանած է անոնց աղաչանքին. "Դուք իմ գործերուս արգելք կ'ըլլաք. եւ քաշեց իր ատրձանակը եւ վիրաւորեց անոնցմէ ոմանք, եւ շարուսնակեց իր վայրագ կոտորածը:"

Րատի Պէյ Սեբաստիոյ նախկին երեսփոխան Նուրէտտին Պէյի հետ կը շրջի Եոզղատի եւ Զորումի շրջանները. Շէյխլէր գիւղի մօտ "լերան վրայ կը տեսնեն Հայերու դիակներ, գարշահոտ, եւ նեխած, նետուած գետերու մէջ, արդէն փտած վիճակի մէջ եւ կտոր կտոր եղած: Այս սարսափներուն առջեւ Նուրէտտին Պէյ եւ Րատի Պէյ անէծքներ կը թափեն:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Ն Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ն Ե Ր

Նահանգներու եւ գաւառներու թուրք պաշտօնեաները որոնք կը մերժէին

գործադրել իրենց ղրկուած՝ հայասպանութեան հրամանները, առ հասարակ պաշտօնանկ կ'ըլլալին եւ իրենց տեղէրուէին այնպիսի պաշտօնեաներ որոնք արդէն իսկ տրամադիր էին կատարելու կոտորածի հրահանգները: Անգարայի կուսակալ Մազհար Պէյ եւ Եոզղատի կառավարիչ ձէմալ Պէյ պաշտօնանկ եղան եւ իրենց տեղ բերուեցան ուրիշներ:

Մազհար Պէյ Ռատի Պէյի հարցումին կը պատասխանէ. " Ներքին գործերու նախարարութենէն ստացած հրամաններս չհասկնալ ձեւացուցի. Քիտէք որ ուրիշ նահանգներու մէջ տեղահանութեան գործողութիւնները աւարտած էին մինչ ես դեռ չէի սկսած գործադրել:

"Աթրած Պէյ հասաւ. ինծի հաղորդեց Հայերու տեղահանութեան, կոտորածի եւ բնաջնջումի վերաբերեալ ներքին գործերու նախարարութեան բերանացի հփամանը: Ես ալ իրեն ըսի. "Ո՛չ, Աթրած Պէյ, ես կուսակալ եմ, ոչ թէ չարագործ աւագակ. կը թողում աթոռս. եկուր դուն տեղս եւ գործադրէ կոտորածի հրամանը:"

ձէմալ Պէյ պաշտօնանկ եղաւ 5 Օգոստոս 1915 ին եւ իր տեղ բերուեցաւ Քէմալ Պէյ որ արդէն կոտորած էր Պողազլեանի Հայերը, իսկ հազարապետ Սալիմ Պէյ պաշտօնանկ եղաւ Օգոստոս 9 ին:

Գ Ա Ղ Տ Ն Ի Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

Կեսարիայէն Շէհապէտին Պէյ Անգարայի հրամանատարին հեռագրեց 27 Յուլիս 1915 ին. "Պատիւ ունիմ ձեզի հաղորդելու որ Եոզղատի զինուորագրութեան հատուածի հաղորդագրութեան համաձայն 472 Հայերու առաջին կարաւանը, առաջնորդը, քահանաները, եւ երեւելիները ի գլուխ, ղրկուեցան երջանիկ պայմաններու մէջ Եոզղատ_Ձիլէ ուղիով: Երկրորդ կարաւանը վաղը ձամբայ պիտի ելլէ եւ թիւը առանձին պիտի հաղորդուի ըստ Եոզղատի զօրակայքի եւ զինուորագրութեան նախագահի հաղորդագրութեան:"

Եոզղատի նսակատան եւ հեռագրատան տնօրէն Կիրիտլի Հիւմի պաշտօնապէս կը վկայէ թէ Անգարայի պատասխանատու քարտուղար Նէճաթի Պէյ հեռագրալիով Սեբաստիոյ պատասխանատու քարտուղար Ղանի Պէյի կը պատուիրէ որ Եոզղատի առաջին կարաւանի Հայերուն յաւիտենական հանգիստը ապահովէ:

Հազարապետ Սալիմ Պէյ պաշտօնապէս կը վկայէ. "Առաջին կարաւանի առաջումի ընթացքին 472 տեղահանուած Հայերը կոտորուեցան Սեբաստիոյ կուսակալ Մուամմէր Պէյի հրամանով՝ հակառակ այն հրամաններուն որոնք տրուեցան իրեն [Թէվաիզ Պէյի Գ] Միւթէսարըձի եւ նուաստ ծառայիս կողմէ: Ինքն իսկ ընկերանալ որոշեց կարաւանին եւ յանդգնեցաւ անոնց [472 Հայերու Գ] փորել տալ հասարակաց փոս մը ինձէ Զայիրի մէջ տարագրուածները կոտորելու եւ թաղելու համար: Երբ իմացանք այս բանը, անմիջապէս դրկեցինք զինայրերու տեղապահ ձեւատ էֆէնտին ձիշղ այն վայրը եւ իրեն պաշտօն յանձնեցինք կարաւանը առջնորդելու դէպի Սեբաստիա եւ ետ կանչեցինք գնդապետ Թէվաիզ էֆէնտին: Այսպէս սով կրցանք ոճիրին առաջքն առնել եւ կարաւանը ողջ առողջ հասաւ Սեբաստիա:"

Նէձաթի կանխապէս տեղեակ ըլլալով ձէմալ եւ Սալիմ Պէյերու բացասական տրամադրութեան, ինք անձամբ Զորում գնաց եւ ջանաց ուրիշ միջոցով գործադրել տալ կոտորածի հրամանը մինչեւ որ ձէմալ եւ Սալիմ Պէյերու պաշտօնանկութեան հրամանը հասնի բարձրագոյն իշխանութենէն:

Եոզղատցի Ապտիւլ ձէպպարզատէ էտիպ Պէյ, Սելեւկիոյ նարկին կառավարիչ, իր գրաւոր պաշտօնական վկայութեամբ կը հաստատէ թէ Անգարայի պատասխանատու քարտուղար Նէձաթի Պէյ հաղորդած էր Հայերու կոտորածի հրամանը Եոզղատի կառավարիչ ձէմալ Պէյի, որ մերժած էր կատարել ջարդի հրամանը:

"Կառավարութիւնը հրահանգած է Հայերը աքսորել կանխապէս որոշուած վայրեր եւ յիշեցուցեր է Նէձաթի Պէյի թէ ինք [ձէմալ Գ] չ'ուզեր գործել կառավարութեան հրամանին հակառակ, եւ թէ ինք բացարձակապէս հակառակ է Հայերու բնաջնջումին: Ասոր վրայ Նէձաթի Պէյ իրեն ըսած է. 'Թէեւ կառավարութեան տուած հրամանը երեւութապէս Հայերը աքսորել է, սակայն աքսորի բուն նպատակը Միութիւն եւ Յառաջդիմութիւն կուսակցութեան եւ ներքին գործերու նախարարութեան համար Հայերը բնաջնջել է եւ այսպէսով ծառայութիւն մատուցանել մեր հայրենիքին:"

ՋԱՐԴԱՎԱՅՐԵՐԸ ԿՈՐՈՇՈՒԻՆ ԵՒ ԿՈՏՈՐԱՍԻ ՊԱՇՏՍՆԵԱՆԵՐ ԿՍԱՆՈՒԱՆՈՒԻՆ

Եղբայրացի զօրակայքի հրամանատար հազարապետ Սալիմ Պէյ դատաւորի առջեւ գրաւորապէս կը վկայէ եւ կը ~~հաստատէ~~ ^{յայտնէ} սպանդանոց որոշուած վայրերը եւ կու տայ ջարդի համար նշանակուած պաշտօնեաներու անունները:

"Գայմազամ Բէմալ երբ Եղբայր հասաւ, Սսման Թիւրքիմ Պէյ Կըզըլ Գոճայի քաղաքապետի պաշտօնէն հանուեցաւ:

"Զինայրերու հրամանատարի օգնական նուման պաշտօն ստացաւ Սորկուն դիւղաւանի Հայերը կոտորելու:

"Քաղաքապետարանի տնօրէն Ահմէտ Էփէնտիի եղբայրը Ռիզա Ջավուշ պաշտօն ստացաւ Սարայի Քըջանի Հայերը ջարդելու:

"Ջարդավայր նշանակուած Բէլլէրի կոտորածներուն պաշտօնները վստահուեցան հետեւեալներուն. Եղբայր որբերու տնօրէն Մէհմէտի, Պաքըրձի Հաձի Մահմուտի, Թէվփիզատէ Ապտուլլահ Շէվքիի, զինայրերու գնդապետ Շիւքրիի, եւ Պողազլեանի դատաւոր եւ ժամանակաւոր գայմազամ Ալի Ռիզայի:

"Խաշփինարի մօտակայ ջարդավայրի տնօրէնութիւնը վստահուեցաւ դարձեալ Շիւքրիի, Իսմայիլի, Ահմէտ Ջավուշի, Ջափանգատէ Իսա Պէյի որդի Տէրվիշ Պէյի:

Հազարապետ Սալիմ Պէյ անմիջապէս կ'աւելցնէ. "Ամէնքն ալ իրենց պարտականութիւնը կատարեցին հնազանդելով իրենց մեծաւորներէն ստացած հրամաններուն համաձայն:"

ՏԵՂԱՀԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԿՈՏՈՐԱՍԻ ՊԱՇՏՍՆԱՊԷՍ ՆՈՅՆԻՄԱՍՏ

Տեղահանութիւն եւ կոտորած պաշտօնապէս նոյնիմաստ բառեր էին, մէկը միւսին տեղ փոխն ի փոխ գործածուած: Բէմալի եւ Թէվփիզի հարցաքննութեան ընթացքին Հարցաքննիչ Յանձնախումբի նախագահը կարգաւ կու տայ Պողազլեանի ոստիկանապետ Խուլուսի Պէյի հեռագիրը, որ "կը յայտնէ փաստացի կերպով թէ մենք "տ ե ղ ա հ ա ն ե ց ի ն ք զ ա ն ո ն ք" գործածուած է մենք "զ ա ն ո ն ք ս պ ա ն ն ե ց ի ն ք" ի տեղ:

"Ահա այս հաղորդագրութիւնը կը գործածէ "մենք տեղահանեցինք զանոնք

ասացուածքը "մենք ջարդեցինք զանոնք" իմաստով: "Բնաջնջեցինք" իմաստով կը գործածուի եղեր "Տեղահանեցինք" բառը:

Քէմալի եւ Թէվֆիգի կը հարցուի. "Ինչ ըսել է իրենց աքսորավայրը ղրկեցինք: "Ասոր իմաստը կոտորել եւ բնաջնջել է միթէ":

Պողազլեանի զօրակայքի գնդապետ Մուսթաֆա կը հեռագրէ Անգարայի հրամանատարին. "Այս գիշեր... ձեռք անցուած Հայերէն 14 հոգի իրենց աքսորավայրը ղրկուեցան:"

Անգարայի զօրաբանակի հրամանատար Խալիլ Րէճայի հեռագրով կը հարցնէ. "Հաճէի՞ք իմացնել թէ վերոյիշեալները ինչ պատճառի համար եւ ո՞ր ղրկուեցան:"

Գնդապետ Մուսթաֆա կը պատասխանէ. "Պատիւ ունիմ ձեզի իմացնելու թէ վերոյիշեալ Հայերը կասկածելի ըլլալուն համար... տասնապետ Հիւսէին Աւնիի հսկողութեամբ ջարդուեցան:"

ԳԵՐՄԱՆ ԶՕՐԱՎԱՐՆԵՐ ԿԸ ՍՏՈՐԱԳՐԵՆ ՏԵՂԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Օսմանեան ընդհանուր սպայակոյտէն Գերման զօրավարներ կը ստորագրեն Հայերու տեղահանութեան հրահանգները. Անատոլուի Երկաթուղիի գծին ընդհանուր Տնօրէն Հեռ Ժ. Կիւնթէր միամտօրէն կը ղիմէ Օսմանեան Սպայակոյտի պետ զօրավար Ժրից Պրոնզարդ Ժոն Շէլլէնտորֆի, առանց գիտնալու որ ան ալ իր կարգին ստորագրած էր Հայերու տեղահանութեան հրամանը: Հեռ Կիւնթէր կ'ըսէ. "Մենք մանրամասնօրէն ծեծեցինք այս հարցը զօրավար Ժոն Պրոնզարդի հետ..."

"Հեռ Պրոնզարդ չմերժեց մեր կարծիքները որոնք հակառակ են Խուրթ կառավարութեան որոշումներուն, սակայն ան մատնանիշ ըրաւ այս լնդիւրը, եւ թէ Հեռ Պրոնզարդ, իր [Պրոնզարդի Գ] մասնագէտ կցորդը, նկատեց թէ կարելի է գործադրել նախատեսուած ծրագիրը [Երկաթուղիի գծին հայ պաշտօնեաները եւ աշխատակորները տարագրել Գ]: Դեռ աւելի, ան խոստացաւ խորհրդակցիլ Գերման Դեսպանին հետ եւ գինուորական կցորդին հետ այս հարցին շուրջ... Ան այն կարծիքէն է որ եթէ ինք որոշէ հակառակ պայթար տանիլ այդ միջոցառումին դէմ,

ինք պէտք է միեւնոյն ատեն պատրաստուի հրաժարիլ եթէ չկատարէ իր տեսակէտը։
"Հեռ Պոլորիս չբողոքեց պատերազմական նախարարութեան՝ յանձնարումբին առած
որոշումներուն դէմ, այլ ինքն իսկ թոյլատրեց որ իր իսկ ստորագրութեամբ
այս որոշումները վաւերացուին։"

Հեռ Կիւնթէր կ'աւելցնէ. "Օր մը մեր թշնամիները շատ մեծ գնով ձեռք
պիտի անցնեն այս վաւերագիրը որովհետեւ մեր զինուորական առաքելութեան
անդամներէն մէկուն ս տ ո ղ ա գ ը ու թ ե ա մ ք պիտի կարենան ապացու-
ցանել թե Գերմանները [հառավարութիւն եւ զինուորական իշխանութիւն Գ]
ոչ թէ միայն Հայերու դէմ եղած հալածանքները կասեցնելու համար ոչինչ ըրին,
այլ նաեւ այդ մասին իրենցմէ տրուեցան որոշումներ, այսինքն՝ իրենց կողմէ
ս տ ո ղ ա գ ը ու ե ց ա ն։

"Իրողութիւնը այն է որ վաւերագիրը, որու մասին ջաջ պիտի լսուուի
ապագային, կը կրէ ոչ թէ թրքական այլ գերմանական ստորագրութիւն մը, որ
արժէք պիտի ունենայ նաեւ թուրքերու համար, ինչպէս զինուորական գործավարը
մատնանշեց կծու բառերով։"

Պ Ա Շ Տ Ս Ն Ա Կ Ա Ն Կ Ա Հ Ա Յ Ո Ւ Ց Ա Կ

Հանրութեան դատաստանին կը յանձնենք հայ ընտանիքէ մը գրաւուած տան
գոյքերու պաշտօնական կահացուցակը գնահատուած թուրք մասնագէտներու կողմէ
եւ հաստատուած բազմաթիւ ստորագրութիւններով։

Թուրք Պատերազմական Ատեանը կարդալ կու տայ նոյն կահացուցակը Թէմալի,
Թէվաիզի եւ Կէյեազի ներկայութեան։ Ան կը բովանդակէ 470 կտոր առարկաներ
գնահատուած 15,120 դահեկանի։ Ատեանի նախագահը կը հարցնէ Թէմալի. "Թէվ-
Կիզ եւ Կէյեազ Պէյերը ակումբի անունով գնահատեր են ապրանքներու գինը,
եւ Դ Ո Ւ Ն անկէ մեծ քանակութեամբ ապրանքներ առեր ես ԱՌԱՆՑ ՀԻՆԳ
ՓԱՐԱ ՎՃԱՐԵԼՈՒ։"

Հայ վաճառական Աթանասեան տեղահանուած եւ կոտորուած է իր ընտանիքի
անդամներուն հետ։ Անոր տունը եւ կարասիները կը գրաւեն եւ Երիտասարդ
Թուրքերու ակումբի կը վերածեն։

ԵՈՉՂԱՏԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՆԵՐՍԷՍ ԴԱՆԻԷԼԵԱՆԻ

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՄԱՏԱՆՈՆ

Թուրք Պատերազմական Ատեանը մասնաւորապէս կը զբաղի նաեւ Եոզղատի Առաջնորդ Ներսէս Դանիէլեանի եպիսկոպոսական մատանիով: Նախագահը կը հրամայէ մասնաւոր քննութիւն կատարել թէ ո՞ր եւ ե՞րբ մեռաւ առաջնորդը. թէ ո՞վ էր որ անոր մատէն եպիսկոպոսական մատանին հանեց, թէ ե՞րբ մատանին աճուրդով ծարուեցաւ եւ ո՞վ գնեց զայն որքան վճարելով:

Նախագահը կը հրամայէ. "Առաջնորդը ո՞ր սպանուեցաւ... Անոր մատի մատանին ինչպէս եւ ո՞ր անցաւ էվզափ տնօրէն Կէյի ձեռքը... *ննեցէք ստուգութիւնը եւ անմիջապէս հեռագրով իմացուցէք. թուղթերն ու վաւերագրերը շուտով մեզի ղրկեցէք:"

Եոզղատի կառավարիչը քննութիւն կատարելէ ետք կը հաղորդէ Պատերազմական Ատեանին. "Առաջնորդի մատի մատանին՝ Լ Ո Ւ Մ Ա Ր Բ Ի Յ Ա Ն Չ Ն Ա Ր Ո ՒՄ Բ Ի կազմակերպած աճուրդի ընթացքին երկու հազար երեք հարիւր քսան դահեկանի [812 տուլար եւ յիսուն սէնթի Գ] ծախուած է Կէյի պատասխանատուութեան տակ:"

Կէյ թուրք Պատերազմական Ատեանի նախագահի հարցումին պատասխանեց թէ ինք աճուրդէն գնած էր եպիսկոպոսական մատանին... անուշտ առանց դահեկան մը վճարելու:

Կ Ո Տ Ո Ր Ո Ւ Ա Մ Հ Ա Յ Ե Ր Ո Ւ Կ Ե Ն Ա Ց

Տիկին Ազնիւ Իբրանոսեան կոտորածէն ազատուեցաւ եւ հաշուակալ Վէհպի Պէյի տան մէջ մնաց ժամանակ մը: Կառավարիչ Բէմալ Պէյ եւ իր ժողովականները ամէն գիշեր Վէհպի Պէյի տան մէջ "Հայերու կենաց բաժակներ կը բարձրացնէին" եւ կ'որոշէին երկրորդ օրուան իրենց կատարելիք գործերը: Մինչ Տիկին Ազնիւ կիներու յարկաբաժինին մէջ մտիկ կ'ընէր անոնց խօսակցութիւնը եւ առած որոշումները: Ան Պատերազմական Ատեանի առջեւ կը վկայէ. "Ես պահուշտած էի այդ տան մէջ... Ամէն օր Բէմալ եւ Թէվֆիգ Վէհպիի տան այրերու յատկացուած բաժնին մէջ կը խորհրդակցէին..."

"Քէմալ. Այս կինը սուտ կը խօսի...

"Նախագահ. /Քէմալի կը հարցնէ/ Օղիի սեղաններու շուրջ խախճանքներ չսարքեցի՞ք:

"Ազնիւ. Այո՛, ես չեմ ^{ուրանար} ~~մտնար~~ /եղած բարիքը, բայց չեմ կրնար մոռնալ միեւնոյն ատեն որ անոնց հետ քու [Վէհպի Պէյի Գ] սենեակին մէջ կը խմէիք իրարու կրկնելով "Հայերու կենաց... Ես դրան ետեւէն մտիկ կ'ընէի:"

Աւելի մանրամասնութիւններ փափաքողները կրնան կարդալ "Եոզղատի Հայասպանութեան Վաւերագրական Պատմութիւնը" որ անգլերէնի պարզ համառօտութիւնն է: Հայերէն հատորը գրուած էր տարիներ առաջ, Պէյրութի մէջ Եոզղատի հայրենակցական միութեան ատենապետին խնդրանքով՝ իբր յաւելուած նոյն գաւառի պատմագրքին, որուն տպագրութիւնը կարելի չեղաւ շարունակել Պէյրութի եղբայրսպան կռիւներու հետեւանքով:

Եոզղատի Հայասպանութեան Վաւերագրական Պատմութիւնը անգլերէն լեզուով գրուած է, մօտաւորապէս հազար էջերէ կը բաղկանայ: Հայերէն գրքէն գոյանալիք գումարը պիտի յատկացուի անգլերէնի հրատարակութեան:

Ապրիլ 24 էն մինչեւ Մայիսի վերջ եղած կանխիկ ապսպրանքները պիտի արժեն միայն 27, 50 տուար առաքումի ծախքով միասին: Մայիս 31 էն ետք գրքի գինը պիտի ըլլայ 35 տուար: *Գրանարկան արդար 32 և 42!*

Թող փաքաքողները իրենց չէքերը գրեն Գրիկէրի անունով եւ դրկեն հետեւեալ հասցէին

K R I E G E R
P.O. Box 357
Forest Hills, N.Y. 11375

Սահմանափակ օրինակներ հրատարակուած են այս դրքէն որուն մէջ փոքր պաշտօնական վաւերագրերը միայն կը խօսին:

ՇՈՎԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆՈՒԹԵԱՆ ՎԱԵՐԱԳՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՆԸ

Երկրորդ շրջանի շրջանառության վաւերագրական Պատմութիւնը գիրք մընչնման ուրիշ գիրքերու, գեղապատկեր, 468 էջերէ բաղկացած:

Սակայն ան բոլորովին տարբեր է մինչեւ հիմա հրատարակուած բոլոր գիրքերէն իր մասնաշատուկ բովանդակութեամբ: Ամէն ինչ անոր մէջ նորութիւն է. ամէն ինչ յայտնութիւն է ոչ թէ միայն հայութեան այլ նաեւ ամբողջ միջազգային պատմութեան եւ իրաւարոհութեան համար:

Այս հատորը գիտական ուսումնասիրութիւն մըն է հրատարակուած հայաստանութեան 65րդ տարեդարձին առթիւ, լոկ թուրք պաշտօնական վաւերագրերու լոյսին տակ բանաձեւուած եւ հանրութեան դատաստանին յանձնուած:

Այս գրքի թուրք պաշտօնական վաւերագրերու վաւերականութիւնը հաստատուած է նոյնինքն թուրք Պատերազմական Արտակարգ Ատեանի կողմէ, որ 1919-1921 տարիներու ընթացքին Հայերու բռնի տեղահանութեան եւ կոտորածի պատասխանատուները դատեց, Սոմանեան քաղաքային եւ զինուորական պատժագրքերու տրամադրութեան համաձայն վճիռներ արձակեց գործածելով թուրք պաշտօնական վաւերագրերու բովանդակութիւնը: Այս վճիռներէն շատեր հրատարակուած են թուրք Պատերազմական Ատեանի պաշտօնաթերթ ԹԱԳՈՒԻՄԸ ՎԱԳԱՅԻ ՏԻՎԱՆԸ ՀԱՐՊԻ ԷՍՐՁԻ ՄՈՒՀԱԿ ԵՄԱՅԸ ԶԱՊԻՍ ԸԵՐԻՏԵՍԻ ի յաջորդական թիւերուն մէջ:

ՎԱԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՆ

Պոլսոյ զօրակայքի հրամանատար եւ Թէշքիլաթը Մարսուսայի վարիչ հազարապետ ձեւատ Պէյ կը փորձէ ուրանալ: Ատեանի նախագահը կարգաւ կու տայ հեռագիրներ, որոնցմէ երեքը կը կրէին անոր ստորագրութիւնը:

Նախագահը կը հարցնէ ձեւատ Պէյի. "Այս երեք առաջին հեռագիրներուն ստորագրութիւնը ձերն է:

"ձեւատ Պէյ. քննել է ետք ստորագրութիւնները, այդպէս կը մտածեմ: Անոնք կընան իմս ըլլալ: Զեմ յիշեր, ժամանակ անցած է:"

Ատեանի նախագահը չի գոհանար այս տատամսոտ խոստովանութեամբ. կրկին

կը հարցնէ ամբաստանեալին. " Այս հեռագրին վարի կողմը լուսանցքի մէջ նոթագրութիւն մը կայ. "այսպիսի կարեւոր հեռագիրներու բնագիրները պէտք է ետ վերադարձուին կանոնի համաձայն: Կ'ըսես զանոնք պահելու համար Ինքնաշարժ Մախուսայի թղթածրարներու մէջ:" Ինչ ըսել կ'ուզես:

"Ճեւատ Պէյ. Ինչպէս..."

Նախագահի հրամանով քարտուղարը կը կարդայ. "Ինքնաշարժ Մախուսայի կանոնին հետեւելով անհրաժեշտ է հեռագիրներու բնագիրները ետ վերադարձնել...

"Նախագահ. ասիկա ձեր ձեռագիրն է:

"Ճեւատ Պէյ. Նայիմ, Տէր Իմ, բնագիրները պէտք է ըլլան, վերադարձուած եւ թղթածրարներու մէջ դասաւորուած ըլլալու են:

"Նախագահ. լուսանցքի վարի գրութիւնը ձեր ձեռագիրը չէ":

"Ճեւատ Պէյ. ձեռագիրն իմս պէտք ըլլայ..."

"Նախագահ. Թող անգամ մըն ալ նայի:

"Ճեւատ Պէյ. այս Զեռնագիրն իմս է..."

"Նախագահ. անգամ մըն ալ ցոյց տուէք:

"Ճեւատ Պէյ. ասիկա իմ ձեռագիրս է..."

Ուրիշ օրինակ մը.

Թուրք Պատերազմական Ատենի առջեւ ամբաստանեալներ եւ երբեմն ալ վկաներ կ'ուրանան առ հասարակ գրութիւնն ու ստորագրութիւնը:

Կառավարիչ Քէմալ Պէյի գրաւոր հարցաքննութիւնը տեղի ունեցած էր 15 եւ 16 Դեկտեմբեր 1918 ին: Այդ առթիւ ան յայտնութիւն մը կատարած էր թէ Հայերու տեղահանութեան վերաբերեալ հրամաններէն ոմանք ա յ ռ ու ա ծ էին ընթերցումէն ետք՝ դրկողի բացայայտ հրամանով:

Ատենի նախագահը կը հարցնէ կառավարիչ Քէմալի. "Նախնական հարցաքննութեան մէջ ըսած էք որ տեղահանութեան թուղթերու մէկ մասը այրած ենք. ասիկա ձեր ստորագրութեան տակ է. ո՞ր թուղթերը այրեցիք:

"Քէմալ. ես այդ վկայութիւնը գրած ատենսարդէն ձամբորդութենէ նոր եկած,

յոգնած վիճակ ունէի. աճապարանօք գրեցի, որովհետեւ միջոց չտուին հանգստանալու. ատիկա ձիղղ չէ:

"Ընդհանուր Դատախազ. ես այդ քննիչ մարմնոյ մէջ էի. այս հարցումներուն պատասխանը երեք չորս ժամէն գրեց. հետեւեալը իր այս խօսքը ձիղղ չէ:"

Երբ Քէմալ ուրիշ վաւերագրերու մասին ալ այսպիսի խուսափողական պատասխաններ տուաւ, յատկապէս հազարապետ Շէհապէտտին Պէյի 207 թուահամար 29 Յուլիս 1915 թուակիր հեռագրի մասին, որ կը հաստատէ թէ Քէմալ կոտորել տուած է 9660 հայեր. Ատեանը Ձմիւռնիայէն կանչել տուաւ նոյն հեռագիրը ստորագրող Շէհապէտտին Պէյը, որ իր կարգին խուսափողական պատասխաններ տուաւ: Այն ատեն վկայութեան կանչուեցաւ զօրավար Խալիլ Ռէճայի Պէյ, որ ստացած էր հայերու կոտորածը տեղեկագրող Շէհապէտտինի հեռագիրները:

Նախագահի հրամանով քարտուղարը կը կարդայ 207 թուահամար հեռագիրը: Շէհապէտտին կը պատասխանէ. "Զեմ յիշեր այս խնդիրը:"

Ընդհանուր Դատախազը կը սպառնայ. "Այս վկան խուսափողական պատասխաններ տալուն համար պիտի չարտօնուի իզմիր դառնալու:" Ընդհանուր Դատախազը կ'առաջարկէ Շէհապէտտին Պէյի ստորագրութեամբ հեռագիրները կարդալ Ատեանին առջեւ, եւ կ'եզրափակէ որ նոյն հեռագիրները պ ա շ տ օ ն ա կ ա ն եւ վաւերական են: Շէհապէտտին մարմրուք կ'ունեայ կամ կը ձեւացնէ:

Յ Ա Պ Ա Ղ Ո Ւ Մ

Ներկայ ուսումնասիրութեան գլխաւոր պատճառներէն մին է 1925 էն իվեր ՄԵՌԵԱԼ ԼԵՃՈՒԻ ՎԵՐԱՍՈՒԱՍ ԱՐԱԲԱՏԱՌ ԽՐՔԵՐԷՆԸ: Արաբատառ թրքերէն կարդացող եւ հասկցող անձերու թիւը, ամբողջ աշխարհի վրայ, մատով կարելի է հաշուել. հին սերունդէն արաբատառ թրքերէնի վարժ անհատներ եւ վարպետներ հետզհետէ կ'անհետանան եւ նոր սերունդէն շատ քիչեր կը յանդգնին նոյն դժուարին լեզուին հետամուտ ըլլալիս:

Հին թրքերէնի դասախօսներէն ոմանք համալսարաններու մէջ արաբատառ

Թրքերէն ձեռագիր կառուցու մեծ դժուարութիւն ունին:

ՎԱԻՇՐԱԳՐՇՐՈՒ ՎԵՐԾԱՆՈՒՄ ԵՒ ԽԱՐԳՍԱՆՈՒԹԻՒՆ

Անշուշտ խօսքը ծածկագրի մասին չէ:

Արաբատառ Թրքերէնի մասնագէտի մը յաջողութեամբ տրուեցաւ ձեռագիր կամ տպուած լուսատիպ օրինակը Թուրք վաւերագրերու բնագրէն կամ պաշտօնապէս վաւերացուած պատճէնէն առնուած: Առաջին մասնագէտը պաշտօն ունէ՞ր միայն կարգալու կամ վերծանելու արաբատառ թրքերէնը եւ զայն վերածելու հայատառ կամ լատինատառ թրքերէնի:

Առաջին մասնագէտի կարգացած վաւերագրի լուսանկարը եւ վերծանումի օրինակը տրուեցան արաբատառ թրքերէնի երկրորդ մասնագէտի, որուն պաշտօնն էր սրբագրել սխալները, եթէ կային, եւ արաբատառ թրքերէնէն ուղղակի թարգմանել հայերէնի, անգլերէնի կամ գաղղիերէնի:

Արաբատառ թրքերէն վաւերագրի լուսատիպ օրինակը, առաջին մասնագէտի վերծանումը, երկրորդ մասնագէտի կատարած սրբագրութեան եւ թարգմանութեան հետ, յանձնուեցան արաբատառ թրքերէնի երրորդ մասնագէտի մը, որ իր կարգի սրբագրեց անհրաժեշտ սխալները, եթէ կային, թէ վերծանումի եւ թէ թարգմանութեան մէջ:

Ապա, արաբատառ թրքերէնի առաջին, երկրորդ եւ երրորդ մասնագէտները գրողին հետ միասնաբար խղճամօրէն վերաքննեցին վերծանումը բաղդատելով արաբատառ թրքերէնի հետ եւ կատարուած թարգմանութեան մէջ ջանացին նուազագոյնի վերածել սպրդած սխալները:

Հաճոյքով կ'ընդունուի արաբատառ թրքերէնի մասնագէտներու, եթէ կան, գիտական դիտողութիւնները, նկատի առնելով անշուշտ 1940-1950 տասնեակի ընթացքին թրքագէտներու կողմէ հաստատուած կանոնները:

Ընթերցողը պէտք է գիտնայ որ ներկայ հատորը հայասպանութեան ամբողջ պատմութիւնը չէ, այլ մաս մը որ կը պատկերացնէ Եոզղատ գաւառի մէջ կատարուած հայասպանութիւնը Թուրք Պատերազմական Ատեանի հաւաքած պաշտօնագրերու լոյսին տակ: Հայասպանութեան ամբողջական պատմութիւնը կարելի

պիտի ըլլայ լրացնել հրատարակելով իւրաքանչիւր նահանգի եւ գաւառի հայաս-
պանութեան վաւերագրական պատմութիւնը որ նման է Եոզղատի հայասպանութեան
պատմութեան:

Ինչո՞ւ Եոզղատ եւ ոչ ուրիշ քաղաք մը կամ գաւառ մը:

Եոզղատի հայասպանութեան վաւերագրական պատմութիւնը ԱՌԱՋԻՆ ԱՆԿԱՄ
լոյս կը տեսնէ որովհետեւ Թուրք Պատերազմական Ատեանը առաջին անգամ ըլլա-
լով 5 Փետրուար 1919 ին սկսաւ Եոզղատի Հայերու տեղահանութեան եւ ջարդի
պատասխանատուները դատել եւ 8 Ապրիլ 1919 ին արձակեց աջ շին մահավճիռը
Թուրք պաշտօնական վաւերագրերու բովանդակութեան լոյսին տակ: Եոզղատի
կառավարիչ Քէմալ կախաղանի դատապարտուեցաւ եւ Սուլթան Մէհմէտ Զ. Վահի _
տէտտին 10 Ապրիլ 1919 ին հաստատեց մահավճիռը, եւ Քէմալ Պոլիս Պայազիտի
հրապարակին վրայ կախաղան բարձրացաւ:

Մենեւէ է առաջ՝ կախաղանի վրայէն Քէմալ յայտարարեց. " Սիրելի ազգա-
կիցներ, ես Թուրք պաշտօնեայ մըն եմ: Ես գործադրեցի այն հրամանը զոր
ստացայ: Իմ պարտականութիւնս կատարեցի խղճամիտ կերպով: Կ'երդնում որ ես
ԱՆՄԵՂ ԵՄ: Ասիկա է իմ վերջին յայտարարութիւնս թէ այսօր եւ թէ վաղը: "

Դատարարութեան առաջին օրը կառավարիչ Քէմալի պաշտպան փաստաբանները
Ատեանի առջեւ բողոքեցին եւ առաջարկեցին նախապէս դատել Թուրք դահլիճի
նախարարները որոնց հրամանները գործադրուած էին:

Ա ՎԱԻՇՐԳՐԵՐԷՆ ՆՄՈՅՏ ՄԸ

Կառավարիչ Քէմալ Պէյը մահուան դատապարտելու համար Թուրք Պատերազ-
մական Ատեանը գործածեց Թուրք պաշտօնական վաւերագրեր:

Պոլսոյ Հարցաքննիչ Յանձնախումբի նախագահը հետեւեալ հարցումը ուղ-
ղեց կառավարիչ Քէմալի. "Մինչեւ ԶՅ Յուլիս 1915 թուականը Պողազլեանի եւ
գիւղերու մէջ Դ Ո Ւ Ն երեք հազար վեց հարիւր վաթսուէն Հայեր կոտորել
տուած ես: Զօրաբաժնի հրամանատար Շէհապէտտին Պէյի կողմէ [Անգարայի Գ]
զօրաբանակին ղրկուած Զ07 թուահամար եւ ԶՅ Յուլիս 1915 թուակիր ծածկագիր
հեռագրի լուծումէն յայտնի է:

"Այս թիւը միայն մինչեւ 29 Յուլիս շարդուած Հայերու թիւն է:"

ԹԵՂԵԿԻԼԱՍԸ ՄԱՐՍՈՒՍԱ

Թուրք Պատերազմական Ատեանի տրամադրութեան տակ գտնուած Թուրք պաշտօնական վաւերագրերու համեմատ ներքին գործերու եւ արդարութեան նախարարներու հրամաններուն համաձայն կայսրութեան քաղաքներու մէջ կազմուեցան մասնայատուկ յանձնախումբեր որոնք բանտերէն ազատ արձակեցին դատապարտուած իսլամ ոճրագործները եւ զանոնք արձանագրեցին Թէշքիւաթր Մախսուսայի հրոսակներու ցանկերուն մէջ: Այս հրոսակները ղրկուեցան կանխապէս շարդավայր որոշուած տեղեր հայ կարաւանները կոտորելու եւ կողոպտելու նպատակով:

Եոզղատի բանտէն 15 Մայիս 1915 ին պաշտօնապէս ազատ արձակուեցան 65 իսլամ ոճրագործներ, որոնցմէ 51 ը մարդասպանութեան եւ միւս 14 ը գողութեան կամ աւազակութեան յանցանքով բանտարկութեան դատապարտուած էին:

Այս ոճրագործները ազատ արձակող՝ Եոզղատի կառավարիչ ձեմալ Պէյ պաշտօնապէս վկայեց թէ "Բանտերու մէջ կալանաւոր ոճրագործները գործածուեցան Հայերու կոտորածը իրագործելու համար:"

Եւ նոյն կառավարիչը կ'աւելցնէ. " Որքան ալ ես աչքերովս չտեսայ կոտորածը, սակայն իմացայ թէ Եոզղատ քաղաքէն եւ շրջակայ գիւղերէն տեղահանուած հայ կարաւանները կոտորուեցան եւ բնաջնջուեցան ոստիկաններու, հրոսակներու եւ ժողովուրդին կողմէ:"

Իսկ Թուրք Պատերազմական Ատեանը կը հաստատէ թէ բանտերէն ազատ արձակուած ոճրագործները կամ Թէշքիւաթր Մախսուսայի հրոսակները հայ կարաւաններու կիներն ու մանուկները կոտորելու համար կազմակերպուած էին:

"Թէպէտեւ զօրակոչի սկիզբը 1914 Յուլիսին 4] լուր տարածուեցաւ թէ այս հրոսակները պատերազմի պիտի մասնակցէին, եւ ջանք եղաւ այդպէս համոզել միամիտները, սակայն անոնց վերաբերեալ փաստերէն եւ վաւերագրերէն կը հետեւի որ խնդրի առարկայ հրոսախումբերը կազմակերպուած էին տեղահանութեան հայ կարաւանները կոտորելու եւ բնաջնջելու նպատակով:"

Պատերազմական Ատեանի արձակած վճիռները կը հաստատեն թէ Թէշքիւաթր

Մախսուսայի հրոսակներու միջոցով գործադրուեցաւ հայ ցեղի բնաշնչումը:

ԶՕՐԱՎԱՐ ՎԷՀԻՊ ՓԱՇԱՅԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Կովկասի ռազմաձակատի վրայ Սսմանեան զօրաբանակի հրամանատար Վէհիպ փաշայի գրաւոր վկայութեան համաձայն "Երրորդ բանակի շրջանէն ներս Պէհաէտտին Շաքիր Պէյ կազմեց եւ գործածեց մ ա ղ ու լ մ ս ա գ ո թ ն ե ռ... Գործուած բոլոր խժոժութիւնները, մարդկային չարիքները, ոճիրները եւ անկարգութիւնները Պէհաէտտին Շաքիր Պէյի ձեռքին տակ կազմակերպուած դէպքեր էին մասնաւոր ծրագրի մը համաձայն եւ իրագործուեցան մասնաշատուկ նպատակի մը համար..."

"Բացայայտ է որ Ընդհանուր Դատախազները եւ դատական պաշտօնեաները... պէտք անուղղակի մեղսակիցներ նկատուին:"

Զօրավար Վէհիպ փաշա կը հաստատէ թէ Հայերէն յափշտակուած գումարները եւ արժէքաւոր ինչքերը կանխապէս գոյացած համաձայնութեան մը համեմատ կը բաժնէին մէկ երրորդի համեմատութեամբ կուսակցութեան, կառավարութեան եւ Թէշքիւաթը Մախսուսայի միջեւ:

ՀԱՅԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՐՈՒԻԱԿՆԵՐ

Հայերը բնաշնչելու համար կուսակցութիւնը, կառավարութիւնը եւ պաշտօնեաները ամէն տեսակ պատրուակներ կը փնտռէին, եւ եթէ չգտնէին, ամէն կերպով կը հնարէին զանոնք:

Հազարապետ Ահմէտ Պէյ կը հաստատէ թէ սուտ են գայմագամներու կողմէ ղրկուած տեղեկութիւնները. "Գաւառի սահմաններէն ներս ոչ մէկ կաթիլ արիւն թափուած է որեւէ անհատի քթէն:"

Կեսարիոյ զօրաբաժնի հրամանատար հազարապետ Շէհապէտտին Պէյ կը հեռադրէ Անգարա իր անմիջական մեթաւորին. "Պահակախումբի հրամանատարը ինծի կ'իմացնէ թէ Պողոզլեանի գաւառակին մէջ ոչ մէկ ըմբոստութեան շարժումի նշան կայ, թէ այս գաւառակի հայաբնակ գիւղերը մաքրագործուած են գայմագամի եւ գիւղախումբերու շահապններու վերահսկողութեան տակ: Ոչ թէ միայն այս գաւառակի մէջ մնացած հայ ընտանիքներու գաւակները իրենց բնակած գիւղերու մէջ չեն շրջիր

այլ նաեւ չեն համարձակիր իրենց ոտքերը դուրս դնել իրենց դռներու սեմերէն: "

Անգարայի հինգերորդ զօրաբանակի հրամանատար Միրալայ Խալիլ Ինձայի Պէյ կը հեռագրէ Շէհապէտտինի. "Ճեր հեռագիրներէն յայտնի է որ ձեր նախընթաց հաղորդագրութիւնները չափազանուած էին: Հարկ է այսուհետեւ չհիմնուիլ գայմագամներու տեղեկութիւններու վրայ... Ի՞նչեւ ձեր նախընթաց հաղորդագրութիւնները չափազանցութիւններ կը պարունակեն, սակայն կարելի չէ ուրանալ քանի մը հայ հրոսակներու գոյութիւնը: Կը լսողըմ որ կորովի եւ շուտափոյթ կերպով բնաջնջէք այդ հրոսակները եւ ինծի իմացնէք անոնց թուական կարեւորութիւնը, անոնց զէնքերուն քանակը գործնք գրաւեցիք կամ պիտի գրաւէք..."

ԿՈՏՈՐԱՄԻ ԱՐԴԱՐԱՅՈՒՄԻ ՊԱՏՐՈՒԱԿ

Քաղաքակրթուած աշխարհի աչքերուն առջեւ Հայերու բնաջնջումի սամանեան պետութեան քաղաքականութիւնը պաշտպանելու եւ արդարացնելու համար քաղաքային եւ զինուորական իշխանութիւնները շրջաբերական հրամաններ արձակած են եւ պարտադրած են արձանագրել Հայքի կողմէ գործուած ոճիրներ, հասցուցած վնասներ, արդարացնելու համար կատարուած կոտորածները:

Էնվէրի շրջաբերականը կը հրամայէ. "Բացարձակապէս անհրաժեշտ է հաւաքել եւ կանոնաւորապէս օրէ օր պահել բոլոր ապացոյցները, բոլոր վաւերագրերը որոնք բնոյթ ունին աշխարհի աչքերուն առջեւ արդարացնելու մեր վերաբերումը եւ մեր այն միջոցները գործնք ուղեգրած ենք խորտակելու համար հայ յեղափոխական շարժումը, որպէս զի անոնք հրատարակուին... Ըմբոստներու անուները, անոնց լուսանկարները, անոնց մեզի պատճառած վնասները... պէտք է անպայման ոճիրներու մատեաններուն մէջ տեղ գտնեն եւ ամէն ամիս նոյն մատեաններէն օրինակ մը դրկուի ուղղակի ընդհանուր սպայակոյտին: "

Նոյնպէս քաղաքային իշխանութիւնը ներկայացնող ներքին գործերու նախարար Խալաթ Պէյ կը դրկէ շրջաբերական հրահանգներ բոլոր նահանգներու կուսակալներուն եւ կը յանձնարարէ անոնց հաւաքել "ըմբոստական շարժումներու մասին... վաւերագրեր կամ լուսանկարներ... հայ յեղափոխական ճգումը"

ներուն վերաբերեալ..."

Միրալայ Խալիլ Ռէձայի կը պատասխանէ Անգարայի կուսակալ Աթըճ Պէյի.
"Պատիւ ունիմ իմացնելու որ զօրակոչէն մինչեւ այսօր, [Անգարայի Գ] նահանգէն ներս Հայերը չեն փորձած որեւէ կարեւոր եղեռնափորձ:" Կը ղրկէ զէնքերու ցանկեր եւ խռովարար գրքեր:

ԺԳ. զօրաբաժնի հրամանատար Սիւլէյման Պէյ կը հեռագրէ իր անմիջական մեծաւորին. "Զօրակոչի սկիզբէն մինչեւ այսօր իմ իրաւասութեանս տակ ապրող Հայերէն ոչ մէկը... յարձակում կամ ըմբոստական շարժում կամ յեղափոխական գործ ըրած է:"

ՎԱՅՐԱԳՈՒԹԻՒՆՆԵՐ

Եոզղատցի երեւելի Խուրթ Միւշթէրի Ռիճաթի վկայութեան համաձայն ոստիկանապետ Թէվաիգ Պէյ Գում Գույու հայաբնակ գիւղի 150 տուները եւ 650⁵ աւելի բնակիչները այրեց. "Ողջ մնացող անմեղ մանուկները դաշոյնահար ընել տուաւ եւ հաւու պէս մորթեց եւ մորթել տուաւ:"

Շրջակայ գիւղերու իսլամ բնակիչները չկարենալով դիմանալ երկինք բարձրացող աղաղակներուն, Թէվաիգի ղրկեցին պատուիրակութիւն^ը եւ ըսին անոր.
"Այս արարքը իսլամական օրէնքին հակառակ է. ահ, Թէվաիգ, մեզ ալ սպաննէ, բայց խնայէ սա հայ կիներուն եւ մանուկներուն:"

Թէվաիգ պատասխանած է անոնց աղաչանքին. "Դուք իմ գործերուս արգելք կ'ըլլաք. եւ քաշեց իր ատրձանակը եւ վիրաւորեց անոնցմէ ոմանք, եւ շարու նակեց իր վայրագ կոտորածը:"

Րատի Պէյ Սեբաստիոյ նախկին երեսփոխան Նուրէտտին Պէյի հետ կը շրջի Եոզղատի եւ Զորումի շրջանները. Շէյխլէր գիւղի մօտ "լերան վրայ կը տեսնեն Հայերու դիակներ, գարշահոտ, եւ նեխած, նետուած գետերու մէջ, արդէն փտած վիճակի մէջ եւ կտոր կտոր եղած: Այս սարսափներուն առջեւ Նուրէտտին Պէյ եւ Րատի Պէյ անէծքներ կը թափեն:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Ն Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ն Ե Ր

Նահանգներու եւ գաւառներու Խուրթ պաշտօնեաները որոնք կը մերժէին

գործադրել իրենց ղրկուած՝ հայասպանութեան հրամանները, առ հասարակ պաշտօնանկ կ'ըլլային եւ իրենց տեղ^{էր} բերուէին այնպիսի պաշտօնեաներ որոնք արդէն իսկ տրամադիր էին կատարելու կոտորածի հրահանգները: Անգարայի կուսակալ Մազհար Պէյ եւ Եոզղատի կառավարիչ ձէմալ Պէյ պաշտօնանկ եղան եւ իրենց տեղ բերուեցան ուրիշներ:

Մազհար Պէյ Ռատի Պէյի հարցումին կը պատասխանէ. " Ներքին գործերու նախարարութենէն ստացած հրամաններս չհասկնալ ձեւացուցի. քիտէք որ ուրիշ նահանգներու մէջ տեղահանութեան գործողութիւնները աւարտած էին մինչ ես դեռ չէի սկսած գործադրել:

"Աթրած Պէյ հասաւ. ինծի հաղորդեց Հայերու տեղահանութեան, կոտորածի եւ բնաջնջումի վերաբերեալ ներքին գործերու նախարարութեան բերանացի հրամանը: Ես ալ իրեն ըսի. "Ո՛չ, Աթրած Պէյ, ես կուսակալ եմ, ոչ թէ չարագործ աւագակ. կը թողում աթոռս. եկուր դուն տեղս եւ գործադրէ կոտորածի հրամանը:"

ձէմալ Պէյ պաշտօնանկ եղաւ 5 Օգոստոս 1915 ին եւ իր տեղ բերուեցաւ Քէմալ Պէյ որ արդէն կոտորած էր Պողազլեանի Հայերը, իսկ հազարապետ Սալիմ Պէյ պաշտօնանկ եղաւ Օգոստոս 9 ին:

Գ Ա Ղ Տ Ն Ի Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

Կեսարիայէն Եէհապէտին Պէյ Անգարայի հրամանատարին հեռագրեց 27 Յուլիս 1915 ին. "Պատիւ ունիմ ձեզի հաղորդելու որ Եոզղատի զինուորագրութեան հատուածի հաղորդագրութեան համաձայն 472 Հայերու առաջին կարաւանը, առաջնորդը, քահանաները, եւ երեւելիները ի գլուխ, ղրկուեցան երջանիկ պայմաններու մէջ Եոզղատ_Ձիլէ ուղիով: Երկրորդ կարաւանը վաղը ձամբայ պիտի ելլէ եւ թիւը առանձին պիտի հաղորդուի ըստ Եոզղատի գօրակայքի եւ զինուորագրութեան նախագահի հաղորդագրութեան:"

Եոզղատի նսակատան եւ հեռագրատան տնօրէն Կիրիտլի Հիլմի պաշտօնապէս կը վկայէ թէ Անգարայի պատասխանատու քարտուղար Նէճաթի Պէյ հեռագրաթեւով Սեբաստիոյ պատասխանատու քարտուղար Ղանի Պէյի կը պատուիրէ որ Եոզղատի առաջին կարաւանի Հայերուն յաւիտենական հանգիստը ապահովէ:

Հագարապետ Սալիմ Պէյ պաշտօնապէս կը վկայէ. "Առաջին կարաւանի առաջ-
քուսի ընթացքին 472 տեղահանուած Հայերը կոտորուեցան Սեբաստիոյ կուսակալ
Մուամմէր Պէյի հրամանով՝ հակառակ այն հրամաններուն որոնք տրուեցան իրեն
[Թէվաիգ Պէյի Գ] Միւթէսարըձի եւ նուաստ ծառայիս կողմէ: Ինքն իսկ ընկերա-
նալ որոշեց կարաւանին եւ յանդգնեցաւ անոնց [472 Հայերու Գ] փորել տալ հա-
սարակաց փոս մը ինձէ Զայիրի մէջ տարագրուածները կոտորելու եւ թաղելու
համար: Երբ իմացանք այս բանը, անմիջապէս դրկեցինք զինայրերու տեղապահ
ձեւատ Էփէնտին ձիշղ այն վայրը եւ իրեն պաշտօն յանձնեցինք կարաւանը առաջ-
նորդելու դէպի Սեբաստիա եւ ետ կանչեցինք գնդապետ Թէվաիգ Էփէնտին: Այսպէս
սով կրցանք ոճիրին առաջքն առնել եւ կարաւանը ողջ առողջ հասաւ Սեբաստիա:"

Նէճալթի կանխապէս տեղեակ ըլլալով ձէմալ եւ Սալիմ Պէյերու բացասական
տրամադրութեան, ինք անձամբ Զորում գնաց եւ ջանաց ուրիշ միջոցով գործա-
դրել տալ կոտորածի հրամանը մինչեւ որ ձէմալ եւ Սալիմ Պէյերու պաշտօնան-
կութեան հրամանը հասնի բարձրագոյն իշխանութենէն:

Եոզղատցի Ապտիւլ ձէպպարզատէ Էտիպ Պէյ, Սելեւկիոյ նախկին կառավարիչ,
իր գրաւոր պաշտօնական վկայութեամբ կը հաստատէ թէ Անգարայի պատասխանատու
քարտուղար Նէճալթի Պէյ հաղորդած էր Հայերու կոտորածի հրամանը Եոզղատի կա-
ռավարիչ ձէմալ Պէյի, որ մերժած էր կատարել ջարդի հրամանը:

"Կառավարութիւնը հրահանգած է Հայերը աքսորել կանխապէս որոշուած
վայրեր եւ յիշեցուցեր է Նէճալթի Պէյի թէ ինք [ձէմալ Գ] չ'ուզեր գործել
կառավարութեան հրամանին հակառակ, եւ թէ ինք բացարձակապէս հակառակ է Հա-
յերու բնաջնջումին: Ասոր վրայ Նէճալթի Պէյ իրեն ըսած է. 'Թէեւ կառավարու-
թեան տուած հրամանը երեւութապէս Հայերը աքսորել է, սակայն աքսորի բուն
նպատակը Միութիւն եւ Յառաջդիմութիւն կուսակցութեան եւ ներքին գործերու
նախարարութեան համար Հայերը բնաջնջել է եւ այսպէսով ծառայութիւն մատու-
ցանել մեր հայրենիքին:"

ՋԱՐԴԱՎԱՅՐԵՐԸ ԿՈՐՈՇՈՒԻՆ ԵՒ ԿՈՏՈՐԱՍԻ ՊԱՇՏՍՆԵԱՆԵՐ ԿՐԱՆՈՒԱՆՈՒԻՆ

Եոզղատի գորակայքի հրամանատար հազարապետ Սալիմ Պէյ դատաւորի առջեւ գրաւորապէս կը վկայէ եւ կը ~~հաստատէ~~ ^{յայտնէ} սպանդանոց որոշուած վայրերը եւ կու տայ ջարդի համար նշանակուած պաշտօնեաներու անունները:

"Գայմագամ Բէմալ երբ Եոզղատ հասաւ, Սսման Բիագիմ Պէյ Կըզըլ Գոձայի քաղաքապետի պաշտօնէն հանուեցաւ:

"Զինայրերու հրամանատարի օգնական Նուման պաշտօն ստացաւ Սորկուն գիւղաւանի Հայերը կոտորելու:

"Քաղաքապետարանի տնօրէն Ահմէտ Էփէնտիի եղբայրը Ռիզա Ջավուշ պաշտօն ստացաւ Սարայի Քըջանի Հայերը ջարդելու:

"Ջարդավայր նշանակուած Բէլլէրի կոտորածներուն պաշտօնները վստահուեցան հետեւեալներուն. Եոզղատի որբերու տնօրէն Մէհմէտի, Պաքըրձի Հաձի Մահմուտի, Թէվաիզատէ Ապտուլլահ Շէվքիի, զինայրերու գնդապետ Շիւքրիի, եւ Պողազլեանի դատաւոր եւ ժամանակաւոր գայմագամ Ալի Ռիզայի:

"Խաշփինարի մօտակայ ջարդավայրի տնօրէնութիւնը վստահուեցաւ դարձեալ Շիւքրիի, Իսմայիլի, Ահմէտ Ջավուշի, Ջափանզատէ Իսա Պէյի որդի Տէրվիշ Պէյի: Հազարապետ Սալիմ Պէյ անմիջապէս կ'աւելցնէ. "Ամէնքն ալ իրենց պարտականութիւնը կատարեցին հնազանդելով իրենց մեծաւորներէն ստացած հրամաններուն համաձայն:"

ՏԵՂԱՀԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԿՈՏՈՐԱՍԻ ՊԱՇՏՍՆԱՊԷՍ ՆՈՅՆԻՍԱՍՏ

Տեղահանութիւն եւ կոտորած պաշտօնապէս նոյնիմաստ բառեր էին. մէկը միւսին տեղ փոխն ի փոխ գործածուած: Բէմալի եւ Թէվաիզի հարցաքննութեան ընթացքին Հարցաքննիչ Յանձնախումբի նախագահը կարգաւ կու տայ Պողազլեանի ոստիկանապետ Խուլուսի Պէյի հեռագիրը, որ "կը յայտնէ փաստացի կերպով թէ մենք "տ ե ղ ա հ ա ն ե ց ի ն ք զ ա ն ո ն ք" գործածուած է մենք "զ ա ն ո ն ք ս պ ա ն ն ե ց ի ն ք" ի տեղ:

"Ահա այս հաղորդագրութիւնը կը գործածէ "մենք տեղահանեցինք զանոնք | |

ասացուածքը "մենք ջարդեցինք զանոնք" իմաստով: "Բնաջնջեցինք" իմաստով կը գործածուի եղեր "Տեղահանեցինք" բառը:

Քէմալի եւ Թէվփիգի կը հարցուի. "Ինչ ըսել է իրենց աքսորավայրը ղրկեցինք: "Ասոր իմաստը կոտորել եւ բնաջնջել է միթէ":"

Պողազլեանի զօրակայքի գնդապետ Մուսթաֆա կը հեռագրէ Անգարայի հրամանատարին. "Այս գիշեր... ձեռք անցուած Հայերէն 14 հոգի իրենց աքսորավայրը ղրկուեցան:"

Անգարայի զօրաբանակի հրամանատար Խալիլ Րէճայի հեռագրով կը հարցնէ. "Հաճէի՞ք իմացնել թէ վերոյիշեալները ինչ պատճառի համար եւ ո՞ր ղրկուեցան:"

Գնդապետ Մուսթաֆա կը պատասխանէ. "Պատիւ ունիմ ձեզի իմացնելու թէ վերոյիշեալ Հայերը կասկածելի ըլլալուն համար... տասնապետ Հիւսէին Աւնիի հսկողութեամբ ջարդուեցան:"

ԳԵՐՄԱՆ ԶՕՐԱՎԱՐՆԵՐ ԿԸ ՍՏՈՐԱԳՐԵՆ ՏԵՂԷԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՌԱԿՐՈՆԵՐ

Օսմանեան ընդհանուր սպայակոյտէն Գերման զօրավարներ կը ստորագրեն Հայերու տեղահանութեան հրահանգները. Անատոլուի Երկաթուղիի գծին ընդհանուր Տնօրէն Հեռ ժ. Կիւնթէր միամտօրէն կը դիմէ Օսմանեան Սպայակոյտի պետ զօրավար Ժրից Պրոնզարդ Ժոն Շէլլէնտորփի, առանց գիտնալու որ ան ալ իր կարգին ստորագրած էր Հայերու տեղահանութեան հրամանը: Հեռ Կիւնթէր կ'ըսէ. "Մենք մանրամասնօրէն ծեծեցինք այս հարցը զօրավար Ժոն Պրոնզարդի հետ..."

"Հեռ Պրոնզարդ չմերժեց մեր կարծիքները որոնք հակառակ են ինչ կառավարութեան որոշումներուն, սակայն ան մատնանիշ ըրաւ այս խնդիրը, եւ թէ Հեռ Պրոնզի, իր [Պրոնզարդի Գ] մասնագէտ կցորդը, նկատեց թէ կարելի է գործադրել նախատեսուած ծրագիրը [Երկաթուղիի գծին հայ պաշտօնեաները եւ աշխատակորները տարագրել Գ]: Դեռ աւելի, ան խոստացաւ խորհրդակցիլ Գերման Դեսպանին հետ եւ զինուորական կցորդին հետ այս հարցին շուրջ... Ան այն կարծիքէն է որ եթէ ինք որոշէ հակառակ պայքար տանիլ այդ միջոցառումին դէմ,

ինք պէտք է միեւնոյն ատեն պատրաստուի հրաժարիլ եթէ չկատարէ իր տեսակէտը։
"Հեռ Պոլթրիս չբողոքեց պատերազմական նախարարութեան՝ յանձնարումբին առած
որոշումներուն դէմ, այլ ինքն իսկ թոյլատրեց որ իր իսկ ստորագրութեամբ
այս որոշումները վաւերացուին։"

Հեռ Կիւնթէր կ'աւելցնէ. "Օր մը մեր թշնամիները շատ մեծ գնով ձեռք
պիտի անցնեն այս վաւերագիրը որովհետեւ մեր զինուորական առաքելութեան
անդամներէն մէկուն ս տ ո ղ ա գ ը ու թ ե ա մ ք պիտի կարենան ապացու-
ցանել թե Գերմանները հառավարութիւն եւ զինուորական իշխանութիւն Գ
ոչ թէ միայն Հայերու դէմ եղած հալածանքները կասեցնելու համար ոչինչ ըրին,
այլ նաեւ այդ մասին իրենցմէ տրուեցան որոշումներ, այսինքն՝ իրենց կողմէ
ս տ ո ղ ա գ ը ու ե ց ա ն։

"Իրողութիւնը այն է որ վաւերագիրը, որու մասին ջաշ պիտի լսուուի
ապագային, կը կրէ ոչ թէ թրջական այլ գերմանական ստորագրութիւն մը, որ
արժէք պիտի ունենայ նաեւ թուրքերու համար, ինչպէս զինուորական գործավարը
մատնանշեց կծու բառերով։"

Պ Ա Շ Տ Ս Ն Ա Կ Ա Ն Կ Ա Հ Ա Յ Ո Ւ Յ Ա Կ

Հանրութեան դատաստանին կը յանձնենք հայ ընտանիքէ մը գրաւուած տան
գոյքերու պաշտօնական կահացուցակը գնահատուած թուրք մասնագէտներու կողմէ
եւ հաստատուած բազմաթիւ ստորագրութիւններով։

Թուրք Պատերազմական Ատեանը կարդալ կու տայ նոյն կահացուցակը Բէմալի,
Թէվաիզի եւ Ֆէյեազի ներկայութեան։ Ան կը բովանդակէ 470 կտոր առարկաներ
գնահատուած 15,120 դահեկանի։ Ատեանի նախագահը կը հարցնէ Բէմալի. "Թէվ-
ֆիզ եւ Ֆէյեազ Պէյերը ակումբի անունով գնահատեր են ապրանքներու գինը,
եւ Դ Ո Ւ Ն անկէ մեծ քանակութեամբ ապրանքներ առերես ԱՌԱՆՑ ՀԻՆԳ
ՓԱՐԱ ՎՃԱՐԵԼՈՒ։"

Հայ վաճառական Աթանասեան տեղահանուած եւ կոտորուած է իր ընտանիքի
անդամներուն հետ։ Անոր տունը եւ կարասիները կը գրաւեն եւ Երիտասարդ
Թուրքերու ակումբի կը վերածեն։

ԵՈՋՂԱՏԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՆԵՐՍԷՍ ԴԱՆԻԷԼԵԱՆԻ

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՄԱՏԱՆՈՆ

Թուրք Պատերազմական Ատեանը մասնաւորապէս կը զբաղի նաեւ Եոզղատի Առաջնորդ Ներսէս Դանիէլեանի եպիսկոպոսական մատանիով: Նախագահը կը հրամայէ մասնաւոր քննութիւն կատարել թէ ո՞ր եւ ե՞րբ մեռաւ առաջնորդը. թէ ո՞վ էր որ անոր մատէն եպիսկոպոսական մատանին հանեց, թէ ե՞րբ մատանին աճուրդով ծարուեցաւ եւ ո՞վ գնեց զայն որքան վճարելով:

Նախագահը կը հրամայէ. "Առաջնորդը ո՞ր սպանուեցաւ... Անոր մատի մատանին ի՞նչպէս եւ ո՞ր անցաւ էվգաձի տնօրէն Կէյի ձեռքը... *Ննեցէք ստուգութիւնը եւ անմիջապէս հեռագրով իմացուցէք. թուղթերն ու վաւերագրերը շուտով մեզի ղրկեցէք:"

Եոզղատի կառավարիչը քննութիւն կատարելէ ետք կը հաղորդէ Պատերազմական Ատեանին. "Առաջնորդի մատի մատանին՝ Լ Ո Ւ Մ Ա Ր Բ Ի Յ Ա Ն Վ Ն Ա Ռ Ո ՒՄ Բ Ի կազմակերպած աճուրդի ընթացքին երկու հազար երեք հարիւր քսան դահեկանի [812 տուար եւ յիսուն սէնթի 9] ծախուած է Կէյի պատասխանատուութեան տակ:"

Կէյի Թուրք Պատերազմական Ատեանի նախագահի հարցումին պատասխանեց թէ ինք աճուրդէն գնած էր եպիսկոպոսական մատանին... անուշտ առանց դահեկան մը վճարելու:

Կ Ո Վ Ո Ր Ո Ւ Ա Մ Հ Ա Յ Ե Ր Ո Ւ Կ Ե Ն Ա Յ

Տիկին Ազնիւ Իբրանոսեան կոտորածէն ազատուեցաւ եւ հաշուակալ Վէհպի Պէյի տան մէջ մնաց ժամանակ մը: Կառավարիչ Քէմալ Պէյ եւ իր ժողովականները ամէն գիշեր Վէհպի Պէյի տան մէջ "Հայերու կենաց բաժակներ կը բարձրացնէին" եւ կ'որոշէին երկրորդ օրուան իրենց կատարելիք գործերը: Մինչ Տիկին Ազնիւ կիներու յարկաբաժինին մէջ մտիկ կ'ընէր անոնց խօսակցութիւնը եւ առած որոշումները: Ան Պատերազմական Ատեանի առջեւ կը վկայէ. "Ես պահուելուս չեմ այդ տան մէջ... Ամէն օր Քէմալ եւ Թէվփիգ Վէհպիի տան այրերու յատկացուած բաժնին մէջ կը խորհրդակցէին..."

"Քէմալ. Այս կինը սուտ կը խօսի...

"Նախագահ. /Քէմալի կը հարցնէ/ Օղիի սեղաններու շուրջ խմբախմբներ չսարքեցի՞ք:

"Ազնիւ. Այո՛, ես չեմ ^{ուրանար} ~~մտնար~~ /եղած բարիքը, բայց չեմ կրնար մոռնալ միեւնոյն ատեն որ անոնց հետ քու [Վէհպի Պէյի Գ] սենեակին մէջ կը խմէիք իրարու կրկնելով "Հայերու կենաց... Ես դրան ետեւէն մտիկ կ'ընէի:"

Աւելի մանրամասնութիւններ փափաքողները կրնան կարդալ "Եոզղատի Հայասպանութեան Վաւերագրական Պատմութիւնը" որ անգլերէնի պարզ համառօտութիւնն է: Հայերէն հատորը գրուած էր տարիներ առաջ, Պէյրուսի մէջ Եոզղատի հայրենակցական միութեան ատենապետին խնդրանքով՝ իբր յաւելուած նոյն գաւառի պատմագրին, որուն տպագրութիւնը կարելի չեղաւ շարունակել Պէյրուսի եղբայրս պան կռիւներու հետեւանքով:

Եոզղատի Հայասպանութեան Վաւերագրական Պատմութիւնը անգլերէն լեզուով գրուած է, մօտաւորապէս հազար էջերէ կը բաղկանայ: Հայերէն գրքէն գոյանալիք գումարը պիտի յատկացուի անգլերէնի հրատարակութեան:

Ապրիլ 24 էն մինչեւ Մայիսի վերջ եղած կանխիկ ապսպրանքները պիտի արժեն միայն 27, 50 տուար առաքումի ծախքով միասին: Մայիս 31 էն ետք գրքի գինը պիտի ըլլայ 35 տուար: *Քա՛ղաքա՛կա՛ն Կոլար 32 և 42!*

Թող փաքաքողները իրենց չէքերը գրեն Գրիկէրի անունով եւ զրկեն հետեւեալ հասցէին

K R I E G E R
P.O. Box 357
Forest Hills, N.Y. 11375

Սահմանափակ օրինակներ հրատարակուած են այս գրքէն որուն մէջ Խուրճ պաշտօնական վաւերագրերը միայն կը խօսին:

ՇՈՎՀԱՍԻ ՀԱՅԱՍՏԱՆՈՒԹԵԱՆ ՎԱԽԵՐԱԳՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՆՆԸ

Եռզջատի Հայաստանութեան վաւերագրական Պատմութիւնը գիրք մըն էնման ուրիշ գիրքերու, գեղապատ, 468 էջերէ բաղկացած:

Սակայն ան բոլորովին տարբեր է մինչեւ հիմա հրատարակուած բոլոր գիրքերէն իր մասնայատուկ բովանդակութեամբ: Ամէն ինչ անոր մէջ նորութիւն է. ամէն ինչ յայտնութիւն է ոչ թէ միայն հայութեան այլ նաեւ ամբողջ միջազգային պատմութեան եւ իրաւարոհութեան համար:

Այս հատորը գիտական ուսումնասիրութիւն մըն է հրատարակուած հայաստանութեան 65րդ տարեդարձին պոթիւ, լոկ թուրք պաշտօնական վաւերագրերու լոյսին տակ բանաձեւուած եւ հանրութեան դատաստանին յանձնուած:

Այս գրքի թուրք պաշտօնական վաւերագրերու վաւերականութիւնը հաստատուած է նոյնինքն թուրք Պատերազմական Արտակարգ Ատեանի կողմէ, որ 1919-1921 տարիներու ընթացքին Հայերու բռնի տեղահանութեան եւ կոտորածի պատասխանատուները դատեց, Սսմանեան քաղաքային եւ զինուորական պատժագրքերու տրամադրութեան համաձայն վճիռներ արձակեց գործածելով թուրք պաշտօնական վաւերագրերու բովանդակութիւնը: Այս վճիռներէն շատեր հրատարակուած են թուրք Պատերազմական Ատեանի պաշտօնաթերթ թԱԳՈՒԻՄԸ ՎԱԳԱՅԻ ՏԻՎԱՆԸ ՀԱՐՊԻ ԷՍՐԾԻ ՄՈՒՀԱԿԷՄԱԹԸ ԶԱՊԻՍ ԺԵՐԻՏԷՍԻ ի յաջորդական թիւերուն մէջ:

ՎԱԽԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՆ

Պոլսոյ զօրակայքի հրամանատար եւ Թէշքիլաթը Մարսուսայի վարիչ հազարապետ ձեւատ Պէյ կը փորձէ ուրանալ: Ատեանի նախագահը կարգալ կու տայ հեռագիրներ, որոնցմէ երեքը կը կրէին անոր ստորագրութիւնը:

Նախագահը կը հարցնէ ձեւատ Պէյի. "Այս երեք առաջին հեռագիրներուն ստորագրութիւնը ձեռն է:

"ձեւատ Պէյ. քննել է ետք ստորագրութիւնները, այդպէս կը մտածեմ: Անոնք կընան իմս ըլլալ: Զեմ յիշեր, ժամանակ անցած է:"

Ատեանի նախագահը չի գոհանար այս տատամսոտ խոստովանութեամբ. կրկին

կը հարցնէ ամբաստանեալին. " Այս հեռագրին վարի կողմը լուսանցքի մէջ ու
թագրութիւն մը կայ. "այսպիսի կարեւոր հեռագիրներու բնագիրները պէտք է
ետ վերադարձուին կանոնի համաձայն: Կ'ըսես զանոնք պահելու համար Իփէշքիլաթը
Մայսուսայի թղթածրարներու մէջ:" Ինչ ըսել կ'ուզես:

"Ճեւատ Պէյ. Ինչպէս..."

Նախագահի հրամանով քարտուղարը կը կարդայ. "Իփէշքիլաթը Մայսուսայի կա-
նոնին հետեւելով անհրաժեշտ է հեռագիրներու բնագիրները ետ վերադարձնել..."

"Նախագահ. ասիկա ձեր ձեռագիրն է:

"Ճեւատ Պէյ. Նայիմ, Տէր Իմ, բնագիրները պէտք է ըլլան, վերադարձուած
եւ թղթածրարներու մէջ դասաւորուած ըլլալու են:

"Նախագահ. լուսանցքի վարի գրութիւնը ձեր ձեռագիրը չէ":

"Ճեւատ Պէյ. ձեռագիրն իմս պէտք ըլլայ..."

"Նախագահ. Թող անգամ մըն ալ նայի:

"Ճեւատ Պէյ. այս Զեռափորն ԻՄՍ է..."

"Նախագահ. անգամ մըն ալ ցոյց տուէք:

"Ճեւատ Պէյ. ասիկա իմ ձեռագիրս է..."

Ուրիշ օրինակ մը.

Թուրք Պատերազմական Ատենի առջեւ ամբաստանեալներ եւ երբեմն ալ վկա-
ներ կ'ուրանան առ հասարակ գրութիւնն ու ստորագրութիւնը:

Կառավարիչ Քէմալ Պէյի գրաւոր հարցաքննութիւնը տեղի ունեցած էր 15
եւ 16 Դեկտեմբեր 1918 ին: Այդ առթիւ ան յայտնութիւն մը կատարած էր թէ
Հայերու տեղահանութեան վերաբերեալ հրամաններէն ոմանք ա յ ռ ու ա ծ էին
ընթերցումէն ետք՝ դրկողի բացայայտ հրամանով:

Ատենի նախագահը կը հարցնէ կառավարիչ Քէմալի. "Նախնական հարցաքննու-
թեան մէջ ըսած էք որ տեղահանութեան թուղթերու մէկ մասը այրած ենք. ասիկա
ձեր ստորագրութեան տակ է. ո՞ր թուղթերը այրեցիք:

"Քէմալ. ես այդ վկայութիւնը գրած ատենսարդէն ձամբորդութենէ նոր եկած,

յոզնած վիճակ ունէի. աճապարանօք գրեցի, որովհետեւ միջոց չտուին հանգստա- նալու. ատիկա ձիջդ չէ:

"Ընդհանուր Դատախազ. ես այդ քննիչ մարմնոյ մէջ էի. այս հարցումներուն պատասխանը երեք չորս ժամէն գրեց. հետեւաբար իր այս խօսքը ձիջդ չէ:"

Երբ Քէմալ ուրիշ վաւերագրերու մասին ալ այսպիսի խուսափողական պատաս- խաններ տուաւ, յատկապէս հազարապետ Շէհապէտին Պէյի 207 թուահամար 29 Յու- լիս 1915 թուակիր հեռագրի մասին, որ կը հաստատէ թէ Քէմալ կոտորել տուած է 8660 Հայեր. Ատեանը Ձմիւռնիայէն կանչել տուաւ նոյն հեռագիրը ստորագրող Շէհապէտին Պէյը, որ իր կարգին խուսափողական պատասխաններ տուաւ: Այն ատեն վկայութեան կանչուեցաւ զօրավար Խալիլ Րէճայի Պէյ, որ ստացած էր Հայերու կոտորածը տեղեկագրող Շէհապէտինի հեռագիրները:

Նախագահի հրամանով քարտուղարը կը կարդայ 207 թուահամար հեռագիրը: Շէհապէտին կը պատասխանէ. "Զեմ յիշեր այս խնդիրը:"

Ընդհանուր Դատախազը կը սպառնայ. "Այս վկան խուսափողական պատասխաններ տալուն համար պիտի չարտօնուի իզմիր դահնալու:" Ընդհանուր Դատախազը կ'առա- ջարկէ Շէհապէտին Պէյի ստորագրութեամբ հեռագիրները կարդալ Ատեանին առջեւ, եւ կ'եզրափակէ որ նոյն հեռագիրները պ ա շ տ օ ն ա կ ա ն եւ վաւերական են: Շէհապէտին մարմրուք կ'ունեայ կամ կը ձեւացնէ:

Յ Ա Պ Ա Ղ Ո Ւ Մ

Ներկայ ուսումնասիրութեան գլխաւոր պատճառներէն մին է 1925 էն իվեր ՄԵՌԵԱԼ ԼԵՃՈՒԻ ՎԵՐԱՄՈՒԱՍ ԱՐԱԲԱՏԱՌ ԽՐԶԵՐԷՆԸ: Արաբատառ թրքերէն կարդացող եւ հասկցող անձերու թիւը, ամբողջ աշխարհի վրայ, մատով կարելի է հաջուել. հին սերունդէն արաբատառ թրքերէնի վարժ անհատներ եւ վարպետներ հետզհետէ կ'անհետանան եւ նոր սերունդէն շատ քիչեր կը յանդգնին նոյն դժուարին լեզուին հետամուտ ըլլալ՝:

Հին թրքերէնի դասախօսներէն ոմանք համալսարաններու մէջ արաբատառ

Թրքերէն ձեռագիր կառուցու մեծ դժուարութիւն ունին:

ՎԱԻՇՐԱԳՐՇՐՈՒ ՎԵՐՍԱՆՈՒՄ ԵՒ ԽԱՐԳՆԱՆՈՒԹԻՒՆ

Անշուշտ խօսքը ծածկագրի մասին չէ:

Արաբատառ Թրքերէնի մասնագէտի մը յաջող դաբար տրուեցաւ ձեռագիր կամ տպուած լուսատիպ օրինակը Թուրք վաւերագրերու բնագրէն կամ պաշտօնապէս վաւերացուած պատճէնէն առնուած: Առաջին մասնագէտը պաշտօն ունէ՞ր միայն կարողալու կամ վերծանելու արաբատառ Թրքերէնը եւ զայն վերածելու հայատառ կամ լատինատառ Թրքերէնի:

Առաջին մասնագէտի կարգացած վաւերագրի լուսանկարը եւ վերծանումի օրինակը տրուեցան արաբատառ Թրքերէնի երկրորդ մասնագէտի, որուն պաշտօնն էր սրբագրել սխալներ, եթէ կային, եւ արաբատառ Թրքերէնէն ուղղակի թարգմանել հայերէնի, անգլերէնի կամ գաղղիերէնի:

Արաբատառ Թրքերէն վաւերագրի լուսատիպ օրինակը, առաջին մասնագէտի վերծանումը, երկրորդ մասնագէտի կատարած սրբագրութեան եւ թարգմանութեան հետ, յանձնուեցան արաբատառ Թրքերէնի երրորդ մասնագէտի մը, որ իր կարգի սրբագրեց անհրաժեշտ սխալները, եթէ կային, թէ վերծանումի եւ թէ թարգմանութեան մէջ:

Ապա, արաբատառ Թրքերէնի առաջին, երկրորդ եւ երրորդ մասնագէտները գրողին հետ միասնաբար խղճմտօրէն վերաքննեցին վերծանումը բաղադատելով արաբատառ Թրքերէնի հետ եւ կատարուած թարգմանութեան մէջ ջանացին նուազագոյնի վերածել սպրդած սխալները:

Հաճոյքով կ'ընդունուի արաբատառ Թրքերէնի մասնագէտներու, եթէ կան, գիտական դիտողութիւնները, նկատի առնելով անշուշտ 1940-1950 տասնեակի ընթացքին թրքագէտներու կողմէ հաստատուած կանոնները:

Ընթերցողը պէտք է դիտնայ որ ներկայ հատորը հայասպանութեան ամբողջ պատմութիւնը չէ, այլ մաս մը որ կը պատկերացնէ Եոզղատ գաւառի մէջ կատարուած հայասպանութիւնը Թուրք Պատերազմական Ատեանի հաւաքած պաշտօնագրերու լոյսին տակ: Հայասպանութեան ամբողջական պատմութիւնը կարելի

պիտի ըլլայ լրացնել հրատարակելով իւրաքանչիւր նահանգի եւ գաւառի հայաս-
պանութեան վաւերագրական պատմութիւնը որ նման է Եոզղատի հայասպանութեան
պատմութեան:

Ինչո՞ւ Եոզղատ եւ ոչ ուրիշ քաղաք մը կամ գաւառ մը:

Եոզղատի հայասպանութեան վաւերագրական պատմութիւնը ԱՌԱՋՐՆ ԱՆԿԱՄ
լոյս կը տեսնէ որովհետեւ Թուրք Պատերազմական Ատեանը առաջին անգամ ըլլա-
լով 5 Փետրուար 1919 ին սկսաւ Եոզղատի Հայերու տեղահանութեան եւ ջարդի
պատասխանատուները դատել եւ 8 Ապրիլ 1919 ին արձակեց առաջին մահավճիռը
Թուրք պաշտօնական վաւերագրերու բովանդակութեան լոյսին տակ: Եոզղատի
կառավարիչ Քէմալ կախաղանի դատապարտուեցաւ եւ Սուլթան Մէհմէտ Զ. Վահի —
տէտտին 10 Ապրիլ 1919 ին հաստատեց մահավճիռը, եւ Քէմալ Պոլիս Պայազիտի
հրապարակին վրայ կախաղան բարձրացաւ:

Մեռնել է առաջ՝ կախաղանի վրայէն Քէմալ յայտարարեց. " Սիրելի ազգա-
կիցներ, ես Թուրք պաշտօնեայ մըն եմ: Ես գործադրեցի այն հրամանը զոր
ստացայ: Իմ պարտականութիւնս կատարեցի խղճամիտ կերպով: Կ'երդնում որ ես
ԱՆՄԵՆ ԵՄ: Ասիկա է իմ վերջին յայտարարութիւնս թէ այսօր եւ թէ վաղը: "

Դատարարութեան առաջին օրը կառավարիչ Քէմալի պաշտպան փաստաբանները
Ատեանի առջեւ բողոքեցին եւ առաջարկեցին նարսպէս դատել Թուրք դահլիճի
նախարարները որոնց հրամանները գործադրուած էին:

Կ

ՎԱԻՇՆԻԳՐԵՐԷՆ ՆՄՈՅՏ ՄԸ

Կառավարիչ Քէմալ Պէյը մահուան դատապարտելու համար Թուրք Պատերազ-
մական Ատեանը գործածեց Թուրք պաշտօնական վաւերագրեր:

Պոլսոյ Հարցաքննիչ Յանձնախումբի նախագահը հետեւեալ հարցումը ուղ-
ղեց կառավարիչ Քէմալի. "Մինչեւ ԶՅ Յուլիս 1915 թուականը Պողոզլեանի եւ
գիւղերու մէջ Դ Ո Ւ Ն երեք հազար վեց հարիւր վաթսուէն Հայեր կոտորել
տուած ես: Զօրաբաժնի հրամանատար Շէհապէտտին Պէյի կողմէ [Անգարայի Գ]
զօրաբանակին ղրկուած Զ07 թուահամար եւ ԶՅ Յուլիս 1915 թուակիր ծածկագիր
հեռագրի լուծումէն յայտնի է:

"Այս թիւը միայն մինչեւ 29 Յուլիս շարդուած Հայերու թիւն է:"

ԹԵՇՔԻՆԱԽԸ ՄԱՌՍՈՒՍԱ

Թուրք Պատերազմական Ատեանի տրամադրութեան տակ գտնուած Թուրք պաշտօնական վաւերագրերու համեմատ ներքին գործերու եւ արդարութեան նախարարներու հրամաններուն համաձայն կայսրութեան քաղաքներու մէջ կազմուեցան մասնայատուկ յանձնախումբեր որոնք բանտերէն ազատ արձակեցին դատապարտուած իսլամ ոճրագործները եւ զանոնք արձանագրեցին Թէշքիւաթը Մախսուսայի հրոսակներու ցանկերուն մէջ: Այս հրոսակները ղրկուեցան կանխապէս շարդավայր որոշուած տեղեր հայ կարաւանները կոտորելու եւ կողոպտելու նպատակով:

Եոզղատի բանտէն 15 Մայիս 1915 ին պաշտօնապէս ազատ արձակուեցան 65 իսլամ ոճրագործներ, որոնցմէ 51 ը մարդասպանութեան եւ միւս 14 ը գողութեան կամ աւազակութեան յանցանքով բանտարկութեան դատապարտուած էին:

Այս ոճրագործները ազատ արձակող՝ Եոզղատի կառավարիչ ձէմալ Պէյ պաշտօնապէս վկայեց թէ "Բանտերու մէջ կալանաւոր ոճրագործները գործածուեցան Հայերու կոտորածը իրագործելու համար:"

Եւ նոյն կառավարիչը կ'աւելցնէ. " Որքան ալ ես աչքերովս չտեսայ կոտորածը, սակայն իմացայ թէ Եոզղատ քաղաքէն եւ շրջակայ գիւղերէն տեղահանուած հայ կարաւանները կոտորուեցան եւ բնաջնջուեցան ոստիկաններու, հրոսակներու եւ ժողովուրդին կողմէ:"

Իսկ Թուրք Պատերազմական Ատեանը կը հաստատէ թէ բանտերէն ազատ արձակուած ոճրագործները կամ Թէշքիւաթը Մախսուսայի հրոսակները հայ կարաւաններու կիներն ու մանուկները կոտորելու համար կազմակերպուած էին:

"Թէպէտեւ զօրակոչի սկիզբը [1914 Յուլիսին 4] լուր տարածուեցաւ թէ այս հրոսակները պատերազմի պիտի մասնակցէին, եւ ջանք եղաւ այդպէս համոզել միամիտները, սակայն անոնց վերաբերեալ փաստերէն եւ վաւերագրերէն կը հետեւի որ խնդրի առարկայ հրոսախումբերը կազմակերպուած էին տեղահանութեան հայ կարաւանները կոտորելու եւ բնաջնջելու նպատակով:"

Պատերազմական Ատեանի արձակած վճիռները կը հաստատեն թէ Թէշքիւաթը

Մախսուսայի հրոսակներու միջոցով գործադրուեցաւ հայ ցեղի բնաջնջումը:

ԶՕՐԱՎԱՐ ՎԷՀԻՊ ՓԱՇԱՅԻ ՎԿԱՅՈՒԻՒԻՆԸ

Կովկասի ռազմաձևատի վրայ Սսմանեան զօրաբանակի հրամանատար Վէհիպ փաշայի գրաւոր վկայութեան համաձայն "Երրորդ բանակի շրջանէն ներս Պէհաէտտին Շաքիր Պէյ կազմեց եւ գործածեց մ ա ղ ու լ մ ս ա գ ո ղ ծ ն ե ռ...Գործուած բոլոր խժոժութիւնները, մարդկային չարիքները, ոճիրները եւ անկարգութիւնները Պէհաէտտին Շաքիր Պէյի ձեռքին տակ կազմակերպուած դէպքեր էին մասնաւոր ծրագրի մը համաձայն եւ իրագործուեցան մասնաշատուկ նպատակի մը համար..."

"Բացայայտ է որ Ընդհանուր Դատախազները եւ դատական պաշտօնեաները... պէտք անուղղակի մեղսակիցներ նկատուին:"

Զօրավար Վէհիպ փաշա կը հաստատէ թէ Հայերէն յափշտակուած գումարները եւ արժէքաւոր ինչքերը կանխապէս գոյացած համաձայնութեան մը համեմատ կը բաժնէին մէկ երրորդի համեմատութեամբ կուսակցութեան, կառավարութեան եւ Թէշքիւթի Մախսուսայի միջեւ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՐՈՒԻԱԿՆԵՐ

Հայերը բնաջնջելու համար կուսակցութիւնը, կառավարութիւնը եւ պաշտօնեաները ամէն տեսակ պատրուակներ կը փնտռէին, եւ եթէ չգտնէին, ամէն կերպով կը հնարէին զանոնք:

Հազարապետ Ահմէտ Պէյ կը հաստատէ թէ սուտ են գայմագամներու կողմէ ղրկուած տեղեկութիւնները. "Գաւառի սահմաններէն ներս ոչ մէկ կաթիլ արիւն թափուած է որեւէ անհատի քթէն:"

Կեսարիոյ զօրաբաժնի հրամանատար հազարապետ Շէհապէտտին Պէյ կը հեռագրէ Անգարա իր անմիջական մեծաւորին. "Պահակախումբի հրամանատարը ինծի կ'իմացնէ թէ Պողազլեանի գաւառակին մէջ ոչ մէկ ըմբոստութեան շարժումի նշան կայ, թէ այս գաւառակի հայաբնակ գիւղերը մաքրագործուած են գայմագամի եւ գիւղախումբերու շահապնդու վերահսկողութեան տակ: Ոչ թէ միայն այս գաւառակի մէջ մնացած հայ ընտանիքներու գաւակները իրենց բնակած գիւղերու մէջ չեն շրջիր

այլ նաեւ չեն համարձակիր իրենց ոտքերը դուրս դնել իրենց դռներու սեմերէն: "

Անգարայի հինգերորդ զօրաբանակի հրամանատար Միրալայ Խալիլ Ինձայի Պէյ կը հեռագրէ Շէհապէտտինի. "Ճեր հեռագիրներէն յայտնի է որ ձեր նախընթաց հաղորդագրութիւնները չափազանց առաջնորդ էին: Հարկ է այսուհետեւ չհիմնուիլ գայմագամներու տեղեկութիւններու վրայ... Ի՞նչեւ ձեր նախընթաց հաղորդագրութիւնները չափազանցութիւններ կը պարունակեն, սակայն կարելի չէ ուրանալ քանի մը հայ հրոսակներու գոյութիւնը: Կը խնդրեմ որ կորովի եւ շուտափոյթ կերպով բնաջնջէք այդ հրոսակները եւ ինծի իմացնէք անոնց թուական կարեւորութիւնը, անոնց գէնքերուն քանակը գործոնք գրաւեցիք կամ պիտի գրաւէք...":

ԿՈՏՈՐԱՍԻ ԱՐԴԱՐԱՑՈՒՄԻ ՊԱՏՐՈՒԱԿ

Քաղաքակրթուած աշխարհի աչքերուն առջեւ Հայերու բնաջնջումի սսման եան պետութեան քաղաքականութիւնը պաշտպանելու եւ արդարացնելու համար քաղաքային եւ զինուորական իշխանութիւնները շրջաբերական հրամաններ արձակած են եւ պարտադրած են արձանագրել Հայքի կողմէ գործուած ոճիրներ, հասցուցած վնասներ, արդարացնելու համար կատարուած կոտորածները:

Ինվէրի շրջաբերականը կը հրամայէ. "Բացարձակապէս անհրաժեշտ է հաւաքել եւ կանոնաւորապէս օրէ օր պահել բոլոր ապացոյցները, բոլոր վաւերագրերը որոնք բնոյթ ունին աշխարհի աչքերուն առջեւ արդարացնելու մեր վերաբերումը եւ մեր այն միջոցները գործոնք որդեգրած ենք խորտակելու համար հայ յեղափոխական շարժումը, որպէս զի անոնք հրատարակուին... Ըմբոստներու անունները, անոնց լուսանկարները, անոնց մեզի պատճառած վնասները... պէտք է անպայման ոճիրներու մատեաններուն մէջ տեղ գտնեն եւ ամէն ամիս նոյն մատեաններէն օրինակ մը դրկուի ուղղակի ընդհանուր սպայակոյտին: "

